Ազգ
Azg
5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 212(5295)
ISSN: 1829-1651

# Քառորդ դար անց շատ բան չի փոխվել աղետի գոտում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Շատ ժողովուրդներ հպարտությամբ նշում են իրենց պատմության փառավոր իրադարձությունները: Հայերս հակված ենք մեր անցյալի մռայլ ու տխուր էջերը հիշատակելու, օրինակ՝ Անիի անկումը սելջուկներին, ցեղասպանությունը, երկրաշարժը եւ հայոց պատմության այլ ողբերգական դեպքերը: Ամենազարմանալին, գուցե, 451 թվին պարսիկների դեմ մղված Վարդանանց պատերազմի ամենամյա տոնակատարությունն է, պարտության մի պատմություն, որը հայերս դարձրել ենք մեր աննկուն ոգու հաղթանակն ընդդեմ ահեղ, անաստված թշնամու:



Այս տարի մենք պատրաստվում ենք նշելու Սպիտակ-Գյումրի երկրաշարժի 25-ամյակը, որը տեղի ունեցավ 1988 թ. դեկտեմբերի 7-ին, ժամը 11.41-ին:

20-րդ դարն այնքան էլ բարեհամբույր չեղավ հայերիս նկատմամբ: Հայաստանը հազիվ էր վերագտնում իրեն 20-րդ դարի առաջին ցեղասպանության արհավիրքից, երբ 1925 թ.-ին երկրաշարժ տեղի ունեցավ Գյումրիում: Այդ ժամանակ քաղաքը Ալեքսանդրապոլ էր կոչվում եւ գաղթականների ճամբարների կենտրոն էր դարձել: Ալեքսանդրապոլը որբերի քաղաք էր, քանի որ հարյուրհազարավոր երեխաներ, ցեղասպանությունից մազապուրծ այնտեղ էին հավաքվել եւ գտնվում էին միջազգային նպաստամատույց կազմակերպությունների հոգածության ներքո: Հակառակ խորհրդային իշխանության վաղ շրջանի ծանր պայմաններին՝ իրավիճակը հուսադրող էր, մարդիկ վերակառուցման աշխատանքներով էին զբաղված: Ցեղասպանությունից փրկված որբերին պատուհասել էր բնության զայրույթը, ճիշտ այնպես, ինչպես Հայաստանում ապաստան գտած Բաքվի եւ Սումգայիթի ջարդերից փրկվածներին էր ճակատագիրը ենթարկել 1988-ի երկրաշարժի փորձությանը:

Տես էջ 4

# Կուտակային բաղադրիչը մնաց, իսկ ռուսները կիրառումը հետաձգել են

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ Ազգային ժողովում քվեարկության դրվեց ընդդիմության այն հայտարարության տեքստը, որով պահանջվում էր կենսաթոշակային համակարգի պարտադիր կուտակային բաղադրիչի ներդրումը մեկ տարով հետաձգելու հարցը քննարկել: Մինչեւ քվեարկությունը ՀՅԴ-ն 20 րոպե ընդմիջում վերցրեց, բայց դա էլ չօգնեց, որ բացակայողները գան ու օրինագծի հաստատմանն անհրաժեշտ ձայներն ապահովեն, քանի որ, ինչպես եւ ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանն** էր ծանուցել, մեծամասնությունը դեմ էր քվեարկելու: Ի վերջո քվեարկեցին, եւ ստացվեց 45 կողմ, 56 դեմ, եւ օրինագիծը չանցավ:



Դրանից հետո կուտակային բաղադրիչի դեմ պատգամավորների բողոքը շարունակվեց՝ ԱԺ դարպասների մոտ մյուս բողոքողներին միանալով: Բողոքողները շարժվեցին մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, որտեղ նրանց ասվեց, թե ՄԻՊ գրասենյակում քննարկվել է օրենքը, հայտնաբերվել են հակասահմանադրական նորմեր, այնպես որ ՄԻՊ-ում աշխատում են Սահմանադրական դատարան դիմելու հիմնավորումների վրա, ու հնարավոր է՝ ընդդիմադիրների հետ միասնաբար դիմեն ՍԴ:

Ձերծ չենք մնա այս առիթով մի քանի դիտարկումներից. եթե մեր ընդդիմադիրները շատ էին ուզում, որ այս հայտարարությունն ընդունվի, պիտի ջանային, որ ընդդիմադիր խմբակցությունների բավական բացակա պատգամավորները ներկա լինեին, որոնց մի մասը լայեղ չի անում ընդհանրապես գալ Ազգային ժողով, ոմանք չէին զոհել տարաշխարհիկ գործուղումը, ոմանք հենց այնպես չէին ներկայացել, այլապես հայտարարությունը կանցներ ձայների պարզ մեծամասնությամբ:

Տես էջ 2

# ՍԴՀԿ-ՌԱԿ հանդիպում



Ռամկավար Ազատական կուսակցության Երեւանի գրասենյակում երեկ տեղի ունեցավ հանդիպում ՍԴՀԿ եւ ՌԱԿ Հայաստանի կազմակերպությունների վարչությունների միջեւ, որին մասնակցում էին ՌԱԿ ատենապետ Հակոբ Ավետիքյանը, փոխատենապետ Կարեն Կակոյանը, ատենադպիր Սուրեն Սարգսյանը, ինչպես նաեւ ՍԴՀԿ ատենապետ Նարեկ Գալստյանը, փոխատենապետ Վազգեն Մեսրոպյանը, ատենադպիր Հարություն Բալաբանյանն ու քաղաքական դիվանի պատասխանատու Դմիտրի Մարտիրոսյանը: Երկու ավանդական կուսակցությունների ներկայացուցիչները նշեցին, որ ՍԴՀԿ-ն եւ ՌԱԿ-ը ունեն Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականության հետ կապված բազմաթիվ ընդհանրական տեսակետներ: Անդրադարձ կատարվեց Հայաստանի համար բացասական այնպիսի երեւույթների, ինչպիսիք են սոցիալական անարդարությունը, օլիգոպոլիան եւ մենաշնորհները: Ձեռք բերվեց համաձայնություն համատեղել ջանքերը հանուն այդ բացասական երեւույթների վերացման: Հանդիպման ընթացքում խոսվեցին նաեւ սիրիահայության, նրանց տրվող պետական եւ համազգային աջակցությանը վերաբերող հարցերի, ինչպես նաեւ բանակ-հասարակություն առնչությունների մասին: Հանդիպման մասնակիցները պայմանավորվեցին հանդիպումները դարձնել պարբերական եւ քննարկել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

*ՍԴՀԿ մամլո դիվան*

# 40 000 եվրո փոխհատուցում Բելգիայում մահացած հայի ընտանիքին

**Բելգիան պատրաստակամություն է հայտնել 40 000 եվրո փոխհատուցում տրամադրելու մահացած հայ փախստականի՝ Հայաստանում բնակվող ընտանիքին, նոյեմբերի 29-ի իր լրահոսում հրազեկում է Բելգիայի Թագավորության երեք շրջաններից մեկի՝ Ֆլանդրիայի հանրային հեռարձակող VRT-ի Flanderninfo.be գերմանալեզու լրատվական ծառայությունը՝ առանց անուններ հրապարակելու: Մահացածը Բելգիա էր եկել մոտ մեկ տարի առաջ տուրիստական վիզայով՝ երիկամի փոխպատվաստման նպատակով: Օրինական այցի ժամկետը սպառվել է, եւ հիվանդը դիմել է տեղի իշխանություններին՝ բուժման նպատակով ապաստանի հայցով, ինչը մերժել է օտարերկրացիների հարցերով զբաղվող գերատեսչությունը: Անցյալ ամառ հիվանդը Բելգիայում մահացել է: Մահացածի հարազատները դիմել էին Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ Բելգիայից վնասի փոխհատուցման պահանջով: Դատարանը բավարարել է հայցը՝ դատապարտել բելգիական իշխանությունների՝ հիվանդին օգնություն չտրամադրելու վարքագիծը: Բելգիան վճռաբեկ գանգատ չի ներկայացրել, մահացածի Հայաստանում ապրող ընտանիքին իսկույն հատկացնելով 40 000 եվրո փոխհատուցում:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# «Վիքիլիքսը» բացահայտում է Միացյալ Նահանգների գաղտնի զեկույցն ամերիկահայերի վերաբերյալ

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆորնիա Կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր

***Միշտ էլ հետաքրքրական է իմանալ, թե Ամերիկայի հայկական համայնքն ինչպես է դիտարկվում օտարների կողմից: Այդ պատկերն ավելի գրավիչ է դառնում, երբ գնահատականը տալիս է ամերիկացի դիվանագետը մի ներքին զեկույցում:***

***«Վիքիլիքսը» մեծ թվով ամերիկյան կառավարական գաղտնի փաստաթղթեր է հրապարակել, այդ թվում՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հեռագրերը՝ ուղղված Միացյալ Նահանգների պետդեպարտամենտին: Այդ զեկուցագրերից մեկը, 2009 թվականի նոյեմբերի 17-ի թվագրությամբ, դեսպան Մարի Յովանովիչի «գաղտնի» զեկույցն է, որն ընդգրկում է 2009 թվականի նրա շրջայցը Լոս Անջելես, Բոստոն, Նյու Յորք եւ Վաշինգտոն քաղաքներ:***

***Ահա դեսպանի զեկույցի որոշ ուշագրավ հատվածներ՝ «Սփյուռքի համայնքների ներգրավման փորձը. Հայաստան» վերնագրով.***



*Հայաստանում ԱՄՆ նախկին դեսպան Մարի Յովանովիչ*

1. Հայ առաքելական եկեղեցու թեմը «Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի իշխանության ներքո է», մինչդեռ Կիլիկիո առաջնորդարանը «ճանաչում է Հայոց կաթողիկոսի իրավասությունը, որը գտնվում է Անթիլիասում, Լիբանան: Սա միայն վարչական նպատակներով է, սակայն Կիլիկիո առաջնորդարանը ճանաչում է Հայաստանի Էջմիածնի կաթողիկոսի աստվածաբանական գերակայությունը: Կիլիկիո առաջնորդարանը կապված է Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ)/դաշնակների հետ. հիմնադրվել է 1890 թվականին եւ կազմում է Ամերիկայի հայկական համայնքի երեք խոշորագույն հատվածներից մեկը եւ իր բնույթով պահպանողական է»:

Տես էջ 3

ԱԶԳ **Ընթացիկ**

# Հայաստանը նոր հայտեր կներկայացնի ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում ընդգրկվելու համար

ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության պատվավոր ցուցակում ընդգրկված են մարդկության առավել մեծ արժեք ներկայացնող հուշարձաններ եւ հուշահամալիրներ՝ թե՛ հնադարյան, թե՛ ճարտարապետական ժամանակակից գլուխգործոցներ: Հայաստանն ակտիվորեն քայլեր է ձեռնարկում մշակութային իր գոհարները այս ցանկում ներկայացնելու ուղղությամբ: Անվանապես մեր երկիրը մշակութային երեք կոթող ունի ընդգրկված այդ ցանկում. Հաղպատի ու Սանահինի վանական համալիրները՝ իբրեւ մեկ կոթող, Էջմիածնի Մայր տաճարը, Հռիփսիմե, Գայանե, Շողակաթ եկեղեցիները եւ Զվարթնոցի տաճարի ավերակները՝ իբրեւ մեկ կոթող, ինչպես նաեւ Գեղարդն ու Ամաղու կիրճը: «Արմենպրես»-ի թղթակցի հետ զրույցում ՀՀ մշակույթի փոխնախարար Արեւ Սամուելյանը նշեց, որ մինչեւ տարեվերջ նախարարությունը նպատակ ունի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտե ներկայացնել ցուցակում արդեն ընդգրկված Սանահինի վանական համալիրի ընդլայնման եւ Երեւանում տեղակայված իրանական Կապույտ մզկիթի ընդգրկման հայտերը:

«Մտածել ենք Սանահինի վանական համալիրը ընդլայնելու մասին՝ մեկ հայտում ներառելով նաեւ դրան հարակից, 13-րդ դարի կամուրջը եւ 1233 թվականի առանձին կառույց հանդիսացող Կայանաբերդը, որը նախկին հայտում գրանցված չէ»,- տեղեկացրեց Սամուելյանը:

Նրա խոսքով՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության ցուցակում» հայկական մշակութային կոթողները ներկայանում են նաեւ այլ երկրի հայտերի միջոցով:

«Իրանից ցուցակում կա հայկական եղեկեցիների անվանակարգ, որտեղ ներկայացված են երկու վանական համալիր եւ մեկ եկեղեցի, այս նախաձեռնությունը շարունակելի է»,- նշեց փոխնախարարը՝ ավելացնելով, որ Իրանն այն եզակի երկրներից է, որտեղ հայկական եկեղեցիների, դպրոցների եւ կրթամշակութային օջախների նկատմամբ մեծ հոգածություն է ցուցաբերվում:

Հայկական կողմը՝ որպես բարի կամքի արտահայտություն եւ յուրահատուկ պատասխան քայլ Իրանին, նպատակ ունի մինչեւ 2013 թվականի ավարտը հայտ ներկայացնել նաեւ Երեւանի Կապույտ մզկիթը ցուցակում ընդգրկելու համար, եւ այս ուղղությամբ նախարարությունն արդեն աշխատանքներ է տանում: Որպես երկու ազգերի հանդուրժողական ու ակնածալի վերաբերմունքի ապացույց՝ մզկիթի ցուցասրահում հայկական եկեղեցին եւ պարսկական մզկիթը կողք կողքի են տեղադրված:

«Բոլոր հուշարձանները, որոնք ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկում կան, հիմնականում մեր միջնադարյան քրիստոնյա հավատալիքին են վերաբերում: Չնայած հայտեր կազմելու տեսանկյունից փոքր-ինչ դժվար է, սակայն փորձարարական տեսանկյունից շատ հետաքրքրական կլինի որպես մեկ հայտ ներկայացնել Ուխտասարի ժայռապատկերները եւ Ջրաց քարերը: Հայտը բավական ծավալուն է, եւ այն նախնական ցուցակում ներառելու համար հայտը կուղարկենք 2014 -ի ընթացքում»,- պատմեց փոխնախարարը:

Առաջիկայում մշակույթի նախարարությունը բնապահպանության նախարարության հետ քայլեր է ձեռնարկելու նաեւ հայտ ներկայացնելու Նորավանքի վանական համալիրի եւ Ամաղուի կիրճը ցանկում ընդգրկելու համար: Միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր քաղաքներից մեկը՝ Անին ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակում ընդգրկելու համար հայտ է ներկայացնում Թուրքիան, առաջիկայում Անիի քաղաքային ճարտարապետական զարգացման կենտրոն եւ հայկական քաղաք լինելու նպատակով հայկական կողմը նախաձեռնելու է «Անի-Շիրակ» խորագրով հայտ, որը, սակայն, դեռ հստակեցման փուլում է:

«Այս հայտերի դեպքում մենք խոսում ենք հնագիտական հետաքրքրության մասին, սակայն առաջիկայում մենք մի նոր ուղղություն ենք որոշել ներառել մեր հայտերում. դա արդյունաբերական ճարտարապետությունն է: Խոսքը «Հարավկովկասյան երկաթուղու» մասին է, Երեւան-Բաթում երկաթգծի, որը ռուսական ցարի ժամանակներում կառուցած եւ առ այսօր գործող նախկին կայսրության միակ ճանապարհն է: Հայտը ներկայացնելիս երկաթգիծը կընդգրկվի իր բոլոր ենթակառուցվածքներով՝ կայարաններով, կամուրջներով, թունելներով»,- նոր նախաձեռնությանն անդրադառնալով՝ ասաց Սամուելյանը: Նա ավելացրեց, որ այս առնչությամբ արդեն պայմանավորվածություն է ձեռք բերվել «Հարավկովկասյան եկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության տնօրենության հետ, որը հայտնել է գաղափարի իրականացմանն աջակցելու իր պատրաստակամությունը:

Համաշխարհային ժառանգության հարցերով զբաղվող հիմնական մարմինը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կենտրոնն է, որը հիմնվել է 1992 թվականին: Համաշխարհային ցուցակի մեջ ընդգրկելու վերջնական որոշումը պատկանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոմիտեին: Յուրաքանչյուր հայտի ժամկետը եւ ցանկում ընդգրկվելու գործընթացը նվազագույնը պահանջում է մոտ երեք տարի ժամանակ, որը ենթադրում է համապատասխան մասնագետների մանրակրկիտ աշխատանք եւ սահմանված ընթացակարգերի պահպանում:

# Նոր հյուրանոց Երեւանի կենտրոնում՝ «Հայաթ Փլեյս Երեւան»

**Երեւանի Հանրապետության հրապարակի հետնամասում, նախկին «Էրեբունի» հյուրանոցի երկրորդ մասնաշենքում, երեկ բացվեց «Հայաթ Փլեյս» հյուրանոցային ցանցին պատկանող նոր՝ «Հայաթ Փլեյս Երեւան» հյուրանոցը: 10-հարկանի եւ 7 հազար քմ մակերեսով նորաբաց հյուրանոցի շինարարական աշխատանքները մեկնարկել էին 2011-ին, ավարտվել այս տարի, մինչ այժմ ներդրվել է շուրջ 15 մլն դոլար:**

**Ըստ «Հայաթ Փլեյս Երեւանի» սեփականատեր «Ինտեռարմ-Մ» եւ հյուրանոցի կառավարումն իրականացնող «Հայաթ Հոթելզ Քորփորեյշն» ընկերությունների պատասխանատուների, նոր հյուրանոցում բացվել է 70 աշխատատեղ՝ 200 հազար դրամ միջին աշխատավարձով:**




**Երեւանի կենտրոնում եւս մեկ հյուրանոցի բացման արարողությանը մասնակցեց եւ առաջարկվող պայմաններին ու ծառայություններին ծանոթացավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:**

Ա. Ս.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

# Կուտակային բաղադրիչը մնաց, իսկ ռուսները կիրառումը հետաձգել են

*1-ին էջից*

**Մեր մյուս դիտարկումը վերաբերում է իշխանական մեծամասնության զարմանալի համառ պահվածքին այն դեպքում, երբ նրանք հիմա սիրում են ռուսական ուղղության օրինակները, իսկ ռուսները մեկ տարով հետաձգեցին կուտակային բաղադրիչի պարտադիր կիրառումը՝ մինչեւ 2015 թվականը: Ռուսաստանում մեխանիզմները որոշակիացնելու խնդիրներ տեսան, իսկ մերոնք երեւի շատ մտահոգ են էսօրվա մեր երիտասարդների ապահով ծերությամբ ու չեն հետաձգում՝ դե, երիտասարդները սոված էլ կդիմանան: Այնպես որ՝ հունվարի մեկից 1974 թվականին եւ հետո ծնվածների վրա նոր բեռ է ավելանալու՝ աշխատավարձի 5-10 տոկոս պարտադիր կուտակայինի վճարի տեսքով, իսկ դա մոտավորապես որեւէ տեսակի կոմունալ վճարի գին է կազմելու, կամ էլ մերոնք պիտի մի փոքր էլ սահմանափակեն հիմնականում սննդին տրվող իրենց ծախսերը, զսպեն ախորժակը՝ բա չբարեփոխվե՞նք:**




**Երեկ բավական թունդ որակումներով ու մի շարք թվերով համեմված քննարկվեց ՀԱԿ խմբակցության հարցապնդումը՝ Հայաստանում կոռուպցիայի համակարգված եւ համատարած լինելու վերաբերյալ: Հարցապնդումը ներկայացնող Լեւոն Զուրաբյանը խոսում էր կոռուպցիոն բուրգի մասին, տարեկան բյուջեին կոռուպցիայի պատճառով հասցվող 1,7-1,8 մլրդ դոլարի վնասի, իսկ բուն բյուջեից՝ տարեկան 700 մլն դոլար թալանի մասին, ու մեղադրանքներն ուղղվում էին դեպի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների նեղ շրջանակ: Կառավարությունից որպես պատասխանող կողմ ներկայացած արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը նշեց, որ արծարծվող հարցերը կառավարության իրավասությունների շրջանակում չեն եւ այլ հասցեատերեր ունեն՝ բարձրաստիճանների էթիկայի հանձնաժողով, տեղական կառավարման մարմիններ: Իսկ հնչած գնահատականներին էլ կառավարությունը համաձայն չէ՝ կոռուպցիայի ցուցանիշը ԱՊՀ երկրների համեմատ ամենաբարվոքը Հայաստանում է, վերջին 1 տարում 11 կետով բարելավվել են մեր ցուցանիշները:**

**Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի կիզակետում երեկ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանն էր:**

**Նախ Արամ Մանուկյանը հետաքրքրվեց գազի գնով, հայկական կողմի պարտքով եւ դրա դիմաց «Հայռուսգազարդի» 20 տոկոս բաժնեմասի հանձնման իրավական հիմքերով, այն է՝ ինչո՞ւ է մեր կառավարությունը 100 տոկոսով մարել մասնավոր ընկերության պարտքը, հարցը երկրորդեց նաեւ՝ Արծվիկ Մինասյանը:**

**Ըստ Մովսիսյանի՝ պարտքը, որը գոյացել էր գազի սակագնի մեղմման արդյունքում, ինչ-որ ձեւով պետք է մարվեր, 20 տոկոսի գնահատումներն էլ ցույց են տվել, որ այս ձեւով վճարելն է ձեռնտու:**

**Իսկ ընդհանրապես՝ եւ «Հայռուսգազարդի», եւ «Որոտան ՀԷԿ»-ի հետ կապված գործարքների համաձայնագրերը, որպես միջազգային համաձայնագրեր, պետք է բերվեն Ազգային ժողով հաստատման, այն ժամանակ էլ բոլոր խնդիրները կպարզվեն: «Որոտան ՀԷԿ»-ի մասին վաճառքի լուրերը նույնպես պատգամավորների հետաքրքրությունների ծիրում էին՝ Ա. Մինասյանի հետ միասին այդ հարցը, ինչպես նաեւ՝ իրանական գազը Հայաստանի կողմից գնելու հնարավորությունը, հետաքրքրում էր նաեւ Զարուհի Փոստանջյանին: Ա. Մովսիսյանը պատասխանեց, թե իրանական գազը թանկ է՝ 400 դոլար, ձեռնտու չէ գնել, եթե մենք արդեն 189 դոլարով ռուսներից ենք գնում: Իսկ «Որոտան ՀԷԿ»-ը ամերիկյան կողմին վաճառելու լուրը, ըստ Ա. Մովսիսյանի՝ ճիշտ չէ, նման գործարք չկա, ուղղակի կան բանակցություններ, եթե ձեռնտու լինի՝ գործարքը կիրականանա: Ըստ որոշ լուրերի՝ այս գործարքին կարող է խանգարել ՀԷԿ-ը ձեռք բերելու ռուսական կողմի ցանկությունը:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

# Էդուարդո Տոբո. «Հայաստանը թաքնված թանկարժեք քար է»

DINERS CLUB-ի նախագահն ու «Արարատբանկի» վարչության նախագահը երեկ հայտարարեցին Հայաստանում նոր միջազգային վճարային քարտի թողարկման մասին:

Հայաստանում այսօրվանից կթողարկվեն նոր միջազգային վճարային՝ DINERS CLUB քարտեր: Սկզբնական շրջանում կթողարկվի երկու տեսակի այդպիսի քարտ՝ պրեմիում տեսակի սեւ քարտ եւ կլասիկ քարտ: Այս մասին երեկ DINERS CLUB-ի Հայաստանում գործունեություն սկսելու կապակցությամբ տեղի ունեցած մամուլի ասուլիսում հայտարարեց «Արարատբանկի» վարչության նախագահ **Աշոտ Օսիպյանը**:

Հայաստանի համար նոր վճարային քարտերն աշխարհում հանրաճանաչ են եւ նախատեսված են հիմնականում այն մարդկանց համար, ովքեր շատ են ճամփորդում: DINERS CLUB քարտապանները ստանում են բազմաթիվ արտոնություններ եւ զեղչեր օդանավակայաններում, ռեստորաններում, ունենում են ապահովագրություն, դրանց շնորհիվ «հասանելի է դառնում տարբեր երկրների մշակույթը, եւ այս դեպքում Հայաստանի մշակույթն է հասանելի դառնում աշխարհում»: Այս քարտերով հնարավոր կլինի առեւտուր անել 180 երկրներում, ավելի քան 1000 առեւտրային կետերից: «Արարատբանկը» Հայաստանում առաջինն է թողարկելու DINERS CLUB վճարային քարտեր, իսկ համագործակցությունը այս վճարային համակարգի հետ բանկը սկսել է 2 տարի առաջ:

DINERS CLUB INTERNATIONAL-ի նախագահ **Էդուարդո Տոբոն** վստահություն հայտնեց, որ համագործակցությունը «Արարատբանկի» եւ հայկական մյուս բանկերի հետ անպայման կբերի դրական արդյունքների եւ զարգացումների:

«Հայաստանը թաքնված թանկարժեք քար է այն մարդկանց համար, ովքեր դեռ չեն եղել այստեղ», իր տպավորությունը մեր երկրից հայտնեց Էդուարդո Տոբոն: Նա բացառիկ հնարավորություն համարեց, որ Հայաստանում ապրող 3 մլն-ից բացի, 7 մլն հայեր են ապրում աշխարհի այլ երկրներում:

Ըստ Էդուարդո Տոբոյի՝ Հայաստանում թողարկվող պլաստիկ քարտերը կկոչվեն DINERS CLUB ARMENIA: Այսինքն, թողարկվող քարտեր ունեցողները դառնում են համակարգի հայկական ակումբի անդամ: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում այս վճարային համակարգը հիմնված է երեք հիմնասյուների վրա՝ սնունդն ու խոհանոցը, ճամփորդությունը եւ ամենօրյա ծախսերը: Այս ուղղություններով վճարումներ կկատարվեն Հայաստանում, իսկ հայկական DINERS CLUB-ի քարտապանները հնարավորություն կունենան ծանոթանալու Հայաստանի մշակույթին, խոհանոցին, գեղատեսիլ վայրերին:

Ասուլիսի վերջում «Արարատբանկի» վարչության նախագահ Աշոտ Օսիպյանը տեղեկացրեց, որ նախատեսվում է Հայաստանում թողարկել 5 հազար DINERS CLUB քարտեր, որոնց սպասարկման վճարը կգտնվի այլ վճարային քարտերի գոլդ եւ դասական տեսակների վճարների միջակայքում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ

# Եկեղեցիների համաշխարհային խորհրդի վճռական քայլը




«ՌԱԿ մամուլ» էլեկտրոնային թերթի դեկտեմբերի 3-ի համարում Արթուր Հակոբյանը Սիդնեյից տեղեկացնում է, որ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԵՀԽ) խիզախ եւ վճռական քայլ է կատարել՝ հիշեցնելով աշխարհի ժողովուրդներին 1915 թվին հայերին պատուհասած ցեղասպանության մասին եւ պահանջելով ճանաչում ու արդարացի փոխհատուցում:

Հարավային Կորեայի Բուսան քաղաքում անցկացված 10-րդ համաժողովի ժամանակ ԵՀԽ-ն հայտարարել է, որ մտադիր է առաջիկա ապրիլի 24-ին Ժնեւում միջազգային գիտաժողով անցկացնել, որին կմասնակցեն, բացի ԵՀԽ-ի անդամ եկեղեցիներից, նաեւ այլ եկեղեցիներ, միջազգային կազմակերպություններ, պատմաբաններ, իրավաբաններ, եւ մարդու իրավունքների պաշտպաններ:

Երուսաղեմի հայոց պատրիարքարանը ներկայացնող հայր **Բագրատ Բուրջեկյանը** նշել է, որ այդ քայլը հիմնականում միասնական ջանքերի արդյունքն է հայկական պատվիրակության, որին մաս են կազմում Վիգեն արք. Այքազյանը եւ Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

ԵՀԽ-ն հայկական եկեղեցական առաջնորդներից խնդրագրեր էր ստացել Եղեռնի 100-ամյակի առնչությամբ միջոցառումներ կազմակերպելու: Վերոնշյալ գիտաժողովին առընթեր Ժնեւի մայր տաճարում նախատեսվում է նաեւ միջեկեղեցական (էկումենիկ) աղոթք բարձրացնել առ Աստված ի հիշատակ ցեղասպանության հայ զոհերի:

Հիշեցնենք, որ ԵՀԽ-ի 10-րդ համաժողովում պատվիրակների միաձայն քվեարկությամբ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը ընտրվել էր ԵՀԽ-ի նախագահի առաջիկա ութ տարիների համար:

Հ. Ծ.

# «Գիմնազիադա-2013»-ում հայ դպրոցականները նվաճել են 4 մեդալ

Նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 4-ը Բրազիլիայում տեղի ունեցած դպրոցական մարզիկների համաշխարհային 13-րդ Գիմնազիադիայում Հայաստանի դպրոցականների մարզական պատվիրակությունը նվաճել է 4 մեդալ՝ 1 ոսկե եւ 3 բրոնզե:

Հայաստանի ներկայացուցիչներից պատանի շախմատիստ Մանուել Պետրոսյանն արժանացել է ոսկե մեդալի, լողորդ Վահան Մխիթարյանը, ձյուդոյիստներ Սամվել Խաչատրյանը եւ Գեւորգ Խիթարյանը՝ բրոնզե մեդալների:

«Գիմնազիադա-2013» խաղերի ծրագրում ընդգրկված էր 8 մարզաձեւ: Հայաստանի մարզիկները հանդես են եկել 5 մարզաձեւերում՝ լող, աթլետիկա, մարմնամարզություն, շախմատ եւ ձյուդո: Առաջնությանը մասնակցել են 39 երկրների ներկայացուցիչներ: Հայաստանը մեդալների ընդհանուր քանակով զբաղեցրել է 14-րդ տեղը:

Հայաստանի դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիան 2011 թվականից Դպրոցականների մարզական միջազգային ֆեդերացիայի լիիրավ անդամ է եւ իրավունք է ստացել մասնակցելու բոլոր միջոցառումներին: Հայաստանի հավաքականն այս տարի առաջին անգամ է մասնակցել դպրոցականների համաշխարհային Գիմնազիադային:

# «Վիկիլիքսը» բացահայտում է Միացյալ Նահանգների «գաղտնի» զեկույցն ամերիկահայերի վերաբերյալ

*1-ին էջից*

Զեկույցում բացատրվում է, որ «ՀՅԴ-ն/դաշնակները երկու նպատակ ունեն. 1915 թվականի հայերի ջարդերը Թուրքիայում որպես ցեղասպանություն ճանաչումը եւ արեւելյան Թուրքիայում ավանդական հայկական տարածքների վերականգնումը»: Վստահաբար կարելի է ասել, որ Թուրքիայի կառավարությանը դուր չի գա, որ ամերիկյան դիվանագետը Թուրքիայի հատվածները ներկայացրել է որպես «ավանդական հայկական տարածքներ»: Բացի դրանից՝ զեկույցում նշվում է, որ ՀՅԴ-ն «աջակցում է կանանց օժանդակ միությանը՝ հայտնի որպես Հայ օգնության միություն (ՀՕՄ), ի լրումն՝ երիտասարդական եւ մշակութային միություններին եւ ԱՄՆ-ում գործող խոշոր լրատվամիջոցներին, ներառյալ՝ թերթեր, ռադիո եւ հեռուստատեսություն»:

2. Զեկույցում ամերիկահայ կաթոլիկները ներկայացված են որպես «ամենափոքր կրոնական դավանություն.... Հայ կաթոլիկ եկեղեցին աջակցում է քիչ թվով դպրոցների եւ մանկատների, բայց գրեթե ոչ մի գործունեություն չի ծավալում Հայաստանում»:

3. «Հայ բողոքական համայնքը համարվում է ամենահին հայկական համայնքը Միացյալ Նահանգներում, եւ այդ համայնքի անդամները շատ ակտիվ են իրենց՝ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությամբ»:

4. «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը» (ՀԲԸՄ) հիմնադրվել է 1906 թվականին, երկրորդ խոշոր հատվածն է եւ ամենամեծ բարեգործական կազմակերպությունը հայկական համայնքում.... Նրանք կապված են Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) հետ, նաեւ հայտնի են որպես ռամկավարներ, որն ակտիվ է (բայց լուսանցքային) Հայաստանում, Սփյուռքի ամերիկյան համայնքում եւ Միջին Արեւելքում, ինչպես Լիբանանում»:

5. «Հնչակները կամ Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցությունը երրորդն է հայկական համայնքի քաղաքական կազմակերպությունների խմբում եւ ամենասակավաթիվը: Նա գործում է որպես քաղաքական ակումբ Կալիֆորնիայում եւ հրատարակում է շաբաթաթերթ»:

6. Զեկույցում թվարկվում են նաեւ «անկախ կազմակերպություններ, որոնք քաղաքական բնույթ չունեն», ինչպես Ամերիկայի հայկական համագումարը [ԱՀՀ], «Լինսի» հիմնադրամը, «Գաֆեսճյան» հիմնադրամը եւ «Թուֆենկյան» հիմնադրամը: Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը (ANCA) տեղադրված է այս կատեգորիայում, չնայած զեկույցն ընդունում է, որ Հայ դատի հանձնախումբը «ընդհանուր առմամբ ճանաչվում է որպես դաշնակցականների լոբբիստական կազմակերպություն»:

7. Զեկույցը մարդասիրական խմբում ընդգրկել է Հայ օգնության ֆոնդը, «Հայաստան» համահայկական հիմադրամը, Հայաստանի մանուկների հիմնադրամը, «Զինիշյան» հիմնադրամը, Հայկական ակնաբուժական ծրագիրը եւ Հայաստանի ծառատունկ ծրագիրը, սակայն չի նշում Միացյալ հայկական հիմնադրամի մասին, որը 700 միլիոն դոլարի մարդասիրական օգնություն է հասցրել Հայաստան 1988 թվականի երկրաշարժից ի վեր:

8. Դեսպան Յովանովիչը Հայաստանի սփյուռքի նախարարությունը եւ Ազգային մրցունակության հիմնադրամը ներկայացնում է որպես Հայաստանի կառավարության կողմից Սփյուռքի հետ կապ հաստատելու օրինակներ:

9. Զեկույցում հայկական Սփյուռքը քննադատվում է «Հայաստանում ժողովրդավարության, ընտրական բարեփոխումների եւ քաղաքացիական հասարակության զարգացմանը» չաջակցելու համար: Սակայն այնտեղ նշվում է, որ ամերիկահայերը ֆինանսական օժանդակություն են ցուցաբերում երկու վերլուծական կենտրոնների՝ Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնին եւ «Սիվիլիթաս» հիմնադրամին:

Դեսպան Յովանովիչի զեկույցի առավել հետաքրքրական բաժինը վերաբերում է հայ-թուրքական արձանագրություններին: Նա պնդում է, որ ամերիկահայ կազմակերպությունները «սեւեռուն ուշադրություն են դարձնում Հայաստանի արտաքին քաղաքականության որոշումներին եւ արագորեն համախմբում են իրենց աջակիցներին ընդդեմ Հայաստանի կառավարության, եթե Սփյուռքի խմբերը գտնում են, որ կառավարությունը չի գործում Հայաստանի լավագույն շահերից ելնելով: Շատ խմբեր դեմ են հանդես եկել կառավարության տարածաշրջանային հաշտեցման ջանքերին, այն հիմնավորմամբ, որ նման հաշտեցումը չի ընդգրկում Լեռնային Ղարաբաղի եռացող հակամարտության լուծումը կամ ճանաչում, որ Օսմանյան կայսրությունն իրագործել է 1915 թվականի ցեղասպանությունը: Այլ կազմակերպություններ, ինչպիսիք են Ամերիկայի հայկական համագումարը եւ ՀԲԸՄ-ն, հրապարակայնորեն աջակցել են կառավարության քաղաքականությանը, ուղղված տարածաշրջանային համագործակցությանն ու Կովկասում Հայաստանի մեկուսացմանը վերջ դնելուն: 2009 թվականի սեպտեմբերին, ԱՀՀ-ն, ՀԲԸՄ-ն, Արեւելյան եւ Արեւմտյան թեմերի եկեղեցիները եւ ռամկավարները հանդես եկան հայտարարությամբ, որով աջակցում էին նախագահ Սարգսյանի՝ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման արտաքին քաղաքականությանը»:

Չնայած դեսպանի զեկույցը պարունակում է հետաքրքրական տեղեկություններ, սակայն ճշգրիտ եւ համապարփակ ձեւով չի բնութագրում ամերիկահայ համայնքի ողջ պատկերը:

Թարգմանությունը՝
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՎԱԳՅԱՆԻ

# Բաց նամակ

***«Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանին,***
***ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանին,***
***ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ղեկավարությանը***

**ԼՄՓՎ նախկին աշխատակցուհի, Վանաձորի բնակչուհի Ալիսա Խաչիկյանից**

Մոտենում է դեկտեմբերի 7-ը... Անցել է շուրջ 25 տարի այն սեւ օրից...

25 երկարուձիգ տարիներ, որոնք ինձ համար եղել են սուտ համակերպման տարիներ... Իմ յուրաքանչյուր օրն սկսվել է ու ավարտվել դառը հիշողություններով...

...Շատ երիտասարդ էի, երբ վրա հասավ արհավիրքը... Ես, ամուսինս ու երեք երեխաներս մնացինք փլատակների տակ... Բժիշկներին մի կերպ հաջողվեց փրկել միայն իմ կյանքը: Ամիսներ շարունակ կյանքի ու մահվան միջեւ կռիվ տալուց հետո, վերջապես ոտքի կանգնեցի՝ խաթարված ճակատագրով ու առողջությամբ, ընտանիքիս կորստի անբուժելի ցավը սրտիս մեջ: Սա դեռ քիչ էր, շատ շուտ կորցրեցի նաեւ հորս: Այժմ ապրում եմ մորս հետ, որը ծանր վիրահատությունից հետո դարձել է հաշմանդամ: Մեր ապրուստի միակ միջոցը մորս կենսաթոշակն է, որը չի բավականացնում նույնիսկ դեղորայքին: Միակ բանը, որն ապրեցնում էր ինձ, օգնում էր մի քանի ժամով կտրվել իրականությունից, աշխատանքս էր: 2003թ.-ից աշխատել եմ Լոռու մարզային փրկարարական վարչությունում, սակայն 2012թ.-ի օգոստոսի 15-ի թիվ 829 Ա հրամանով դարձա հաստիքների կրճատման զոհ:

Աշխատանքն ինձ համար ոչ միայն ապրուստի միջոց էր, այլ նաեւ տալիս էր ինձ ուժ, կյանքիս՝ իմաստ ու հետաքրքրություն: Բայց չէ, երեւի սա էլ պետք է ինձնից խլեին...

Եվ դա կատարվեց արդեն ոչ բնության ուժերով, այլ մարդու: Ավելի ճիշտ՝ «չինովնիկի», որովհետեւ ՄԱՐԴԸ դա չէր անի, որովհետեւ ՄԱՐԴԸ, մինչեւ «հաստիքների կրճատում» գերանդին ձեռքը կվերցներ ու հունձ կաներ, կնայեր, կուսումնասիրեր այն մարդկանց կենսագրությունը, ում պատրաստվում է ազատել աշխատանքից... Մանավանդ որ սա տեղի է ունենում այն կառույցում, որը կոչվում է «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»: Այս կառույցի բարձր ամբիոններից հաճախ են լսվում ամպագոռգոռ խոսքեր իրենց մարդասիրական ծրագրերի վերաբերյալ, հեռուստաալիքները ողողված են այս ու այն երկրներում աղետյալներին իրենց կողմից ցուցաբերվող օգնության մասին ռեպորտաժներով... Իսկ ԻՐԵՆՑԸ չեն ուզում տեսնել, թե իրենց քթի տակ ինչ է կատարվում, ինչ վիճակում են հայտնվել իրենց աղետյալները, չեն էլ ուզում նկատել... Մենք՝ հայերս, սիրում ենք ցույց տալ աշխարհին, որ մենք լավն ենք, բարի ենք, հարեհաս, օգնության ձեռք ենք մեկնում նույնիսկ օտարերկրացիներին, աշխատանքով ապահովում անգամ հաշմանդամներին, բայց անտեսում ու անուշադրության ենք մատնում մեր մեջ գտնվողին, որը միգուցե ավելի, քան որեւէ մեկը, ունի օգնության կարիք: Ես աշխատել եմ մի համակարգում, որի առաքելությունն է փրկել աղետից տուժածներին, իսկ հիմա անօգնական վիճակում եմ: Այսօր ոչ միայն չեն օգնում ինձ, այլեւ բառիս բուն իմաստով սովի ու հուսահատության գիրկն են գցում իրենց աշխատողին...

«Հարգելի» պարոնայք ղեկավարներ, բազմիցս բանավոր եւ գրավոր խնդրանքով դիմել եմ ձեզ, ստացել եմ անհեթեթ պատճառաբանություններով մերժում. «Հաստիք չկա»: Կարծես հաստիք լինելու-չլինելու հարցը ձեր իրավասության սահմաններում չի լուծվում: Կարո՞ղ եք ինձ ասել, իմ ճակատագրով ու կենսագրությամբ քանի՞ մարդ կա Հայաստանում, եւ եթե կան, նրանցից քանի՞սն են աշխատել ձեր համակարգում: Ասացեք, է՞լ ինչ պիտի անեմ, որ արժանանամ ձեր ուշադրությանն ու գթասրտությանը: Ես էլ գնա՞մ Կիեւյան կամրջի վրա շոու սարքեմ, որ մեր «փրկարար-նախարարը» ինձ օգնության ձեռք մեկնի:

Այժմ դիմում եմ ձեզ բաց տեքստով, պարոնայք չինովնիկներ՝ դուք ԽԻՂՃ չունե՞ք, դուք ՀՈԳԻ չունե՞ք, դուք ԱՍՏՎԱԾ չունե՞ք: Թե՞ ձեզ թվում է, թե պաշտոնը տրված է միայն «փիար» ստեղծելու եւ հարստանալու համար... Հիշեք՝ ոչինչ հավերժ չէ, ձեր դարն էլ է վերջանալու: Եվ կմնաք մի օր ձեր խղճի հետ մեն-մենակ...

Մոտենում է դեկտեմբերի 7-ը... Այդ օրը կառավարության մի շարք անդամների հետ դուք եւս, ձեր «տխուր դեմք» դիմակները հագած, ծաղկեպսակներ կդնեք աղետալի երկրաշարժի զոհերի հիշատակին կանգնեցրած գեղեցիկ խաչքարերի մոտ, դուդուկի տխուր մեղեդու ներքո կարտասանեք սրտաճմլիկ ճառեր եւ ցույց կտաք աշխարհին, թե ինչքան շատ եք ցավում անմեղ զոհերի ու նրանց ողջ մնացած հարազատների համար: Իրականում դուք չգիտեք՝ ինչ բան է ՑԱՎԸ:

Եթե իմ այս խոսքերը, իմ այս հոգու ճիչը հասան ձեր ականջներին, ու դուք մի քիչ անհարմար զգացիք, ուրեմն դեռ մի քիչ ՄԱՐԴ եք...

...Ուրեմն՝ ես դեռ կարող եմ մի քիչ ՀՈՒՅՍ ունենալ...

**ԱԼԻՍԱ ԽԱՉԻԿՅԱՆ**

# Քառորդ դար անց շատ բան չի փոխվել աղետի գոտում

*1-ին էջից*

1988-ին ծնված երեխաներն այսօր արդեն հասուն մարդիկ են, պատրաստ իրենց ընտանիքները կազմելու: Սակայն նրանցից շատերը դեռեւս աղետից քառորդ դար անց դատապարտված են ապրելու «դոմիկների»՝ (ժամանակավոր ապաստարանների) խեղճուկրակ պայմաններում: Երկրաշարժի էպիկենտրոնը Նալբանդ գյուղում էր, որի մոտակայքում գտնվող Սպիտակ քաղաքն ամբողջովին ավերվել էր: Ընդհանուր առմամբ 342 գյուղեր էին վնասվել, որոնցից 58-ը՝ քանդվել էր հիմնահատակ: Այդ ժամանակ հայտարարվեց, որ 25 հազար մարդ էր զոհվել, բայց ականատեսները վկայում են, որ իսկական թիվը կարող էր հասնել մինչեւ 50 հազարի: Մինչեւ 1989 թ. 113 երկրներ օգնություն էին ցուցաբերել մոտ 500 միլիոն դոլարի չափով, իսկ ազերիները բարբարոսաբար հարձակվել էին օգնություն հասցնող որոշ գնացքների վրա:

Ողբերգությունը տեղի էր ունեցել քաղաքական տարաձայնությունների մի ժամանակահատվածում՝ Խորհրդային Միության գոյության վերջին տարիներին, երբ նախագահ Միխայիլ Գորբաչովը գտնվում էր Մ. Նահանգներում: Նա, կրճատելով այցելությունը, անմիջապես վերադարձավ հայրենիք: Այնուհետեւ Հայաստանի հյուսիսային մասի ավերված շրջաններն այցելության ընթացքում անախորժ միջադեպեր արձանագրվեցին: Այդ օրերին ղարաբաղյան անկախության շարժումը նոր էր թափ առել, եւ մարդիկ, շրջապատելով խորհրդային առաջնորդին, արդարություն էին պահանջում ղարաբաղյան խնդրի առնչությամբ: Խորհրդային առաջնորդը նրանց հանդիմանում էր՝ ասելով, որ նման աղետալի իրավիճակում մարդիկ քաղաքականությամբ են զբաղված:



Գորբաչովը խոստացավ 8 միլիարդ դոլար հատկացնել վերակառուցման համար, որը չիրականացավ Խորհրդային կայսրության փլուզման հետեւանքով:

Ճակատագրի քմահաճույքով երեք ողբերգություններ պատուհասեցին Հայաստանին միաժամանակ. երկրաշարժը, ղարաբաղյան պատերազմը եւ կայսրության անկումը: Մեծամորի ատոմակայանը, որն ընդամենը 47 մղոն էր հեռու երկրաշարժի էպիկենտրոնից, հրաշքով անվնաս մնաց: Սակայն դադարեց գործելուց, ինչպես նախատեսված էր: Ատոմային էներգիայի միջազգային մասնագետները գտնում են, որ այնքան խելամիտ չէր ընտրված ատոմակայանի տեղանքը: Եվ դա իրոք այդպես է, եթե հաշվի առնենք, թե ինչ պատահեց Ֆուկուշիմայում (Ճապոնիա) անցյալ տարվա ավերիչ ցունամիից հետո:

Միջազգային եւ մարդասիրական բազմաթիվ կազմակերպություններ օգնության ձեռք մեկնեցին Գյումրու բնակիչներին, բայց քանի որ աշխարհում շատ այլ նման ողբերգություններ տեղի ունեցան դրանից հետո, հայերին մնում էր իրենց գլխի ճարը տեսնել: «Լինսի» հիմնադրամը, ՀԲԸՄ-ն, «Ազնավուր» հիմնադրամը, Հայ օգնության ֆոնդը, Հայ օգնության միությունը եւ բազմաթիվ այլ խմբակցություններ ու միություններ բավական երկար ժամանակ օգնեցին Հյուսիսային Հայաստանի բնակիչներին՝ վերականգնելու քաղաքը եւ հոգեպես ապաքինվելու, սակայն 25 տարի անց կարծես որոշ թմրածություն եւ անտարբերություն է տիրում: Մինչ գյումրեցի շատ ընտանիքներ քարշ են գալիս դեռեւս «դոմիկներում», անդին անվայել համատեղությամբ շքեղ, վերսալատիպ մի հյուանոց է վեր խոյանում: Մի օլիգարխի կառուցած պալատանման այդ կառույցը ավերակների հարեւանությամբ ուղղակի վրդովեցուցիչ է: Վրդովեցուցիչ են նաեւ տուժած ընտանիքներին տրված եւ ցարդ չիրականացված խոստումները:

Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը 1998-ի իր ընտրարշավի օրերին խոստացել էր աղետի գոտին ամբողջովին վերակառուցված տեսնել մինչեւ 2001 թվականը: Մինչդեռ այսօր 4500 մարդ դեռեւս ապրում է «դոմիկներում»:

Հայաստանը գտնվում է երկրաշարժերի գոտում եւ շատ անգամ է բնության կողմից պատժվել: 1925-ի երկրաշարժից բացի, արձանագրություններ կան, որ երկրաշարժեր տեղի են ունեցել Դվինում 893 թվին, 11-րդ դարում սելջուկների կողմից Անիի պաշարման ժամանակ, Կիլիկիայում 1268-ին եւ Զանգեզուրում 1931-ին:

Մի անստույգ պատմություն, ճանաչված ճարտարապետ եւ պատմաբան Միքայել Մազմանյանի կողմից, նշում է, որ 15-րդ դարի վերջերին իր երկրում հալածանքներից փախչելով Կիլիկիայում ապաստան էր գտել Լեոնարդո դա Վինչին, երկրաշարժ է տեղի ունենում եւ արվեստագետը շփոթված ամբոխի հետ պատսպարվում է հայկական մի եկեղեցում, որտեղ եկեղեցու ճարտարապետության վերաբերյալ գծանկարներ է կատարում: Դրանք պահպանվում են մեծ վարպետի «հայկական թղթերում»: Մազմանյանը հավաստացած էր, որ դրանք հետագայում օգտագործվել են վերածնության դարաշրջանի ճարտարապետության մեջ:

Եթե այս պատմությունը ճիշտ է, առնվազն մեկ օգուտ քաղել ենք երկրաշարժի ողբերգությունից: Անկախ դրանից, խորհրդային իշխանությունների մեքենայությունները ցույց տվող մեկ այլ հետաքրքրական պատմությամբ, Մազմանյանի կառուցած ՊԱԿ-ի շենքի բացման օրը, փառավոր ընդունելությունից, շնորհավորական ու շնորհակալական խոսքերից հետո ՊԱԿ-ի աշխատակիցները, նրան մոտենալով, խնդրում եմ չհեռանալ: Դրանից հետո Մազմանյանը 17 տարի անցկացնում է Սիբիրում, արժանանալով խորհրդային ժամանակների «վարձատրությանը»:

Գյումրին այսօր էլ դեռ բաց վերք է: Նրա նախաերկրաշարժյան 220 հազար բնակչությունից մնացել է 125 հազարը: Նվազումը միայն երկրաշարժի հետեւանքը չէ, այլեւ՝ արտագաղթի: Նախկին 100 հազար բնակչից 5 հազար ծնունդի թվաքանակը իջել է 2 հազարի: Հանցագործությունը խիստ տարածված է, եւ ոչ ոք չի կարողանում զսպել թշնամանքը քաղաքի օլիգարխների միջեւ:

Բայց գյումրեցիները անսովոր հումորի զգացում ունեն: Նույնիսկ երկրաշարժը չի կարողացել զրկել նրանց այդ հատկությունից: Քաղաքը, ինչպես էլ կոչվի՝ Գյումրի, Լենինական թե Ալեքսանդրապոլ, միշտ եղել է հայկական մշակույթի ճանաչված կենտրոն: Ստեղծել է թատերական ընկերություններ, բեմադրել օպերաներ, ծնունդ տվել տաղանդավոր բանաստեղծների:

Այդ ծանր փորձություններից եւ ողբերգական իրադարձություններից հետո զարմանալի է, թե ինչպես են մարդիկ շարունակում ապրել այդ տարածքում: Պատասխանը խտացված ձեւով տալիս է երկրաշարժից փրկված Հրաչ անունով մի անձնավորություն. «Չենք կարող մեղադրել մեկնողներին: Բայց գիտակցում ենք, որ քաղաքը մերն է: Էլ ո՞վ պետք է հոգ տանի, պահպանի այս հողակտորը, եթե ոչ մենք: Մենք պետք է շարունակենք ապրել, պայքարել եւ հաղթահարել դժվարությունները, պետք է քաղաքը բարգավաճ դարձնենք, որպեսզի մեր երեխաների կյանքը շատ ավելի լավը լինի, քան մերը: Մեր երեխաները մեր մեծագույն գանձերն են»:

Հասարակ ժողովրդի իմաստությունը միշտ ուսանելի է:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ. Հ. Ծ.**

# Ադրբեջանական նենգափոխություն

Հայաստանում ԻԻՀ դեսպան Մոհամմադ Ռեիսիի մամուլի ասուլիսը լրջորեն անհանգստացրել է Ադրբեջանին: Հարեւան երկրում հատկապես ուշադրության են առել իրանցի դիվանագետի դիտարկումներն այն մասին, որ «ադրբեջանցիները տարածքային հավակնություններ ունեն նաեւ Հայաստանի, այլ երկրների նկատմամբ» եւ որ «Ադրբեջանն ստեղծվել է 1918թ.-ին»:

Դեսպան Ռեիսին, իհարկե, երկու դեպքում էլ ճիշտ է: Բայց ահա ադրբեջանական կողմը, չունենալով որեւէ հակափաստարկ, ավելի ճիշտ՝ ծախսելով իրանական Ատրպատական վային Ադրբեջանի» թեման, որը մինչեւ վերջերս, մինչեւ Իրանի եւ Արեւմուտքի հարաբերություններում որոշակի «ձնհալ» կնկատվեր, Իլհամ Ալիեւի կառավարությունը եւ նրա կողմից լիովին վերահսկվող խորհրդարանը ճանաչել էին որպես «հրատապ լուծում պահանջող»:

Երբեւէ պաշտոնական Բաքուն ստիպված է լինելու շատ հստակ դիրքորոշում արտահայտելու՝ վե՞րջ է դնում Իրանի հյուսիսային նահանգները բռնակցելու քաղաքականությանը, թե՞ ոչ, հրաժարվում է իրանական հազարամյա մշակույթը կողոպտելուց, թե՞ ոչ: Իրանական կողմի բուն հարցադրումը սա է: Եվ որքան էլ Բաքուն ճգնի նահանգը «հնագույն ադրբեջանական պետություն» ներկայացնելու իր ողջ «զինանոցը», բավական ճարպկորեն նենգափոխել է իրանցի դիվանագետի դիտարկումները, դրանք ներկայացրել այնպես, թե նա «չի հարգում Իրանի հոգեւոր առաջնորդի տեսակետը» Լեռնային Ղարաբաղի հարցում:

Ըստ vesti.az-ի, «մի քանի տարի առաջ (կոնկրետ ե՞րբ- Վ. Ա.) ադրբեջանական մի լրատվամիջոց (ո՞ր- Վ. Ա. ) դիմել է Իրանի Իսլամական Հանրապետության ղեկավարի եւ հոգեւոր առաջնորդի քարտուղարությանը, որպեսզի ճշտի նրա կարծիքը Լեռնային Ղարաբաղի շուրջը հայ-ադրբեջանական (՞- Վ. Ա.) հակամարտության վերաբերյալ»:

Ադրբեջանական «լրատվամիջոցի» տեղեկացմամբ, ստացվել է «պատասխան», որտեղ ասված էր. «Այաթոլլա Խամենեի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հանդեպ ի սկզբանե եղել է հստակ եւ բաց. Ղարաբաղը մուսուլմանների հողն է, եւ նրանք, որ զոհվել են՝ մարտնչելով հանուն դրա, շեհիդներ են, իսկ անջատողականների հետ ցանկացած կապ «հարամ» է եւ անօրինական»:

Թե որքանո՞վ է ճիշտ, որ ադրբեջանական «լրատվամիջոցն» այս «պատասխանն» է ստացել ԻԻՀ հոգեւոր առաջնորդի գրասենյակից, խիստ կասկածելի է, քանի որ vesti.az-ը սույն «մեջբերման» որեւէ աղբյուր չի մատնանշել: Բայց եթե անգամ ԻԻՀ հոգեւոր առաջնորդն այդ տեսակետն ունի, միեւնույն է, Հայաստանում Իրանի դեսպանի գնահատականները որեւէ կերպ դրան չեն առնչվում, որովհետեւ նա չի խոսել Լեռնային Ղարաբաղի պատկանելության թեմայով, այլ փաստել է, որ Ադրբեջանն իր հարեւան երկրների հանդեպ ունի տարածքային նկրտումներ:

Ինչո՞ւ է ադրբեջանական կողմը նենգափոխել դեսպան Ռեիսիի հստակ արտահայտած միտքը, իրավիճակը վերածել խճողել իսլամական համերաշխության մասին մտավարժանքներով: Դա ունի շատ պարզ բացատրություն. Բաքվում հասկացել են, որ իրանական կողմը բոլորովին էլ փակված չի համարում «Հարավային Ադրբեջանի» թեման, ...

խնդիրը նենգափոխել ԼՂ հարցում Իրանի կողմնորոշումը «ճշգրտելու անհրաժեշտությամբ», երկու երկրների հարաբերություններում դրանից քիչ բան է փոխվելու:

Տառացիորեն օրերս ՅՈՒՆԵՍԿՕ-ն «համաշխարհային մշակութային արժեք» է ճանաչել «չովգան» կոչվող խաղը, ինչն առաջ է բերել իրանական կողմի զայրույթը: «Այդ նույնն է, եթե մենք ասենք, որ շոտլանդական վիսկին իրանական խմիչք է»,- CNN-ին ասել է իրանցի մի պրոֆեսոր: Մինչդեռ Ադրբեջանի մշակույթի նախարարն անպատկառ կեցվածքով հայտարարել է, թե «դա ողջ ադրբեջանական ժողովրդի հաղթանակն է»:

Հետաքրքրական է՝ ո՞ւմ դեմ: Իհարկե՝ Իրանի, որի կառավարությունն արդեն շուրջ մեկ տարի նույն ՅՈՒՆԵՍԿՕ-ին հորդորում է խոչընդոտել, թույլ չտալ, որ պարսիկ բանաստեղծ Նիզամիի շիրմաքարի պարսկերեն գրությունը ջնջվի եւ փոխարինվի ադրբեջաներենով, ինչպես ցանկանում է անել Ադրբեջանի կառավարությունը:

«Չլինի՞ թե հարեւան երկրների հանդեպ տարածքային հավակնությունների մասին խոսելիս ԻԻՀ դեսպանը նկատի է ունեցել Ադրբեջանի նախագահի այն միտքը, որ Երեւանը եւ Զանգեզուրը պատմական ադրբեջանական հողեր են, որտեղ ադրբեջանցիները կվերադառնան անպայման»,- փարիսեցիաբար հարցրել է vesti.az-ի մեկնաբանը, եւ ինքն էլ պատասխանել. «Բայց այդպես ասելիս նա նկատի է ունեցել, որ ԼՂ հարցի կարգավորումից հետո ադրբեջանցիները կկարողանան ապրել Երեւանում եւ Զանգեզուրում»:

Թե ի՞նչ է երեւակայել Իլհամ Ալիեւը, տվյալ համատեքստում որեւէ հետաքրքրություն չի ներկայացնում: Կրկնում ենք. դեսպան Ռեիսին միանշանակորեն հասկանալ է տվել, որ 1918թ.-ին ստեղծված Ադրբեջանը չի կարող մրցակցել հազարամյակների պատմություն ունեցող Իրանի հետ, եւ ժամանակն է, որ պաշտոնական Բաքուն հրապարակավ հրաժարվի Ատրպատականի եւ իրանական մշակույթի հանդեպ իր իսկ համար վտանգավոր ոտնձգություններից:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

---

**ԲԵՅՐՈՒԹ**

# «Հզբոլլահի» առաջնորդը Բեյրութի ահաբեկչության մեջ մեղադրեց սաուդցիներին

## *Սպանվել է շարժման ղեկավարներից մեկը*



**Լիբանանի շիա արմատականների «Հզբոլլահ» շարժման առաջնորդ, շեյխ Հասան Նասրալլահը երկրի OTV հեռուստաալիքի եթերում Սաուդյան Արաբիայի հետախուզությանն է մեղադրել Բեյրութում Իրանի դեսպանատան մոտ նոյեմբերին իրականացված եւ 23 մարդու կյանք խլած ահաբեկչության համար: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Նասրալլահի խոսքերով, ահաբեկչության պատասխանատվությունը ստանձնած «Աբդուլլահ Ազզամի բրիգադներ» սուննի խմբավորման ղեկավարը Սաուդյան Արաբիայի քաղաքացի է: Շեյխի կարծիքով, դա ցույց է տալիս, որ խմբավորումը կապված է սաուդյան հետախուզության հետ, որը նման խմբավորումներ է ուղարկում աշխարհի տարբեր մասերում առաջադրանքներ կատարելու:**

**Բեյրութում «Հզբոլլահի» վերահսկողությանը ենթակա հատվածում գտնվող դեսպանատան վրա կատարված հարձակումը, Նասրալլահի կարծիքով, Սաուդյան Արաբիայի վրեժն է Իրանից, որը Սիրիայում պաշտպանում է Բաշար Ասադի վարչակարգին:**

**Բեյրութում նոյեմբերի 19-ին Իրանի դեսպանատան մոտ տեղի ունեցած երկու պայթյուններից զոհված 23 անձերից մեկը դեսպանատան մշակութային կցորդն էր: Ահաբեկչության պատասխանատվությունը ստանձնած «Աբդուլլահ Ազզամի բրիգադներ» սուննի խմբավորումը համարվում է «Ալ Ղաիդայի» հետ կապված կազմակերպություն:**

**Լիբանանյան «Հզբոլլահ» շարժումը, ինչպես եւ Իրանը, Սիրիայի հակամարտության մեջ հանդես է գալիս նախագահ Բաշար Ասադի վարչակարգի կողմից: Սաուդյան Արաբիան, ընդհակառակը, աջակցում է սիրիացի ապստամբներին:**

**«Հզբոլլահին» պատկանող լիբանանյան «Ալ Մանար» հեռուստաալիքը դեկտեմբերի 4-ին առավոտյան հաղորդեց, որ Բեյրութից 7 կմ հարավ-արեւելք ընկած Խադաթ գյուղում սպանվել է շարժման հատուկ ծառայությունների ղեկավարներից մեկը՝ Հասան ալ Լակիսը: Սպանությունը տեղի է ունեցել դեկտեմբերի 3-ի ուշ երեկոյան, նրա տան մոտ: Ալ Լակիսի վրա կրակել են ատրճանակից. դիակի վրա գնդակները 5 հետք են թողել:**

**«Հզբոլլահը» այդ սպանության համար պատասխանատու է համարում Իսրայելին, որի գաղտնի ծառայությունները անցյալում մի քանի անգամ մահափորձ էին կազմակերպել նրա դեմ:**

**Սիրիայում քաղաքացիական պատերազմի սկզբից ի վեր Հասան ալ-Լակիսը այդ երկրում ծրագրում էր գործողություններ եւ «Հզբոլլահի» գրոհայիններ ուղարկում Բաշար Ասադի վարչակարգը պաշտպանելու համար:**

---

# Ֆրանսիացի փորձագետները բացառել են Արաֆաթի թունավորման հավանականությունը

Ֆրանսիացի փորձագետները լիովին բացառում են թունավորման հետեւանքով Յասեր Արաֆաթի մահացած լինելու հավանականությունը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով պաղեստինցի առաջնորդի մահվան պատճառների հետաքննության ընթացքին ծանոթ մի աղբյուր:

Ֆրանսիացի մասնագետների կարծիքով, Արաֆաթը մահացել է բնական մահով, իսկ մահվան անմիջական պատճառը եղել է «ընդհանուր վարակումը»: Թե ինչի վրա է հիմնված ֆրանսիացիների այդ վստահությունը՝ աղբյուրները չեն հաղորդում:

BBC-ն նշում է, որ փորձագետները հետազոտել են Արաֆաթի



գերեզմանի բացման ժամանակ աճյունից վերցված փորձանմուշները, որոնք ուղարկվել էին Ֆրանսիա, Շվեյցարիա եւ Ռուսաստան: Դա արվել էր «Ալ Ջազիրա» հեռուստաալիքի հետազոտության արդյունքների հրապարակումից հետո, որոնց համաձայն Պաղեստինյան ինքնավարության նախկին ղեկավարի անձնական իրերի վրա հայտնաբերվել են պոլոնիում-210-ի հետքեր:

Ավելի վաղ Լոզանի (Շվեյցարիա) ռադիոֆիզիկայի ինստիտուտի մասնագետները եզրակացրել էին, որ Արաֆաթի հյուսվածքներում իրոք եղել է պոլոնիումի եւ դրա տրոհման արգասիքների մեծ քանակություն: Այդ տեղեկությունը հրապարակելով՝ շվեյցարացիները հայտարարել էին, որ իրենք այնուամենայնիվ հետեւություններ չեն անի Արաֆաթի մահվան պատճառների վերաբերյալ:

Ռուսաստանցի փորձագետներն առայժմ ոչինչ չեն ասում իրենց հետազոտության արդյունքների մասին:

Մինչդեռ պաղեստինյան ինքնավարության իշխանություններն արդեն հայտարարել են, թե իրենց հայտնի են Արաֆաթի թունավորման մեջ կասկածվող անձանց անունները, բայց դրանք առայժմ չեն հրապարակվի: Անցյալում պաղեստինցիները իրենց ղեկավարի սպանության մեջ մեղադրել էին Իսրայելի հատուկ ծառայություններին:

Արաֆաթը մահացել էր 2004-ին Ֆրանսիայի հիվանդանոցներից մեկում: Այն ժամանակ բժիշկները չէին կարողացել պարզել նրա սրընթաց հիվանդության եւ մահվան պատճառները, իսկ հանգուցյալի այրին արգելել էր դիահերձումը:

**Պ. Ք.**

# Ասք հոգենյութի

## *(Խոհ Հրաչյա Թամրազյանի «Սրբազան խավար» ժողովածուի լույս ընծայման առթիվ)*

***Հրաչյա Թամրազյանի՝ «Սրբազան խավար» խորագրով ժողովածուն բանաստեղծի խոհական, ինտելեկտուալ պոեզիայի բովանդակային ու տաղաչափական համակարգի բյուրեղացումն է: «Եռակերպություն», «Վկայություններ», «Հյուսվածքներ», «Երկու բառ...», «Զուգաշխարհներ», «Աստղաքաղ», «Մերձեցման փորձեր» շարքերի ներքին կառույցում 21-րդ դարի փիլիսոփա բանաստեղծը բացահայտում է տիեզերքի՝ «իբրեւ սրբազան խավարի» ընկալելու աստվածաշնչյան խոհը:***

Ժողովածուն ունի մեկնարկային սկիզբ ՝ «Սրբազան խավար» վերնագրով ասքը, որտեղ Թամրազյանը նախ՝ հռետորական թյունը՝ համընդհանուր հիշողության (*Ու ես վաղուց եմ այսպես թափառում / Անհայտ վայրերով, անհայտ տեղերով, / Հիշողության մեջ այս համընդհանուր / Անուն առ անուն կյանքն անթեղելով):* /«Իմ եւ իմ միջեւ»/

Միջնաշխարհյան տարածականության մեջ բանաստեղծը Բառին նաեւ «իշխանություն» է շնորհում.

*Որ տիրույթներում անկախ, ինքնակա*
*Տիրակալ դառնա բառը առինքնող...*
/«Եռյակ դաշինք»/՝

Բառը գոյավորում է բանաստեղծի Ներքին մարդուն, նա տիրակալն է Միջնաշխարհի, երկկողմ դաշնություն է

Ներքին ես-ի հոգեկան փլուզումների ու երկատվածության կշռույթով էլ Թամրազյանը վերարժեւորում է իր ա/ *անցյալը՝ Այս է քեզ տրված՝ մի նոր անձկությամբ / Դու քո անցյալը միշտ երազես,* կամ՝ *Մենք վերադառնում ենք անցյալներն՝ իբրեւ / Ժամանակների պատռված փառեր, բ/ հոգեկան աշխարհի ներքին հուշերը՝ կարոտը՝ Ակնաքարեր են բյուր աչքերն այդ ջերմ / Ու կարոտներ միշտ անկարելի, վախը՝ Ես սարսափում եմ իմ իսկ սարսափից / Քայլում եմ իմ իմ մեջ՝ միշտ խարխափելով / սեփական մահն իմ հաղթահարելով / Խեղդելով իմ մեջ սեփական վախն իմ...,* տխրությունը՝ *Ու*

Թամրազյանական պոեզիային ներդաշն է նաեւ աշխարհի այս կերպընկալումը՝ *Որ խրվել է այս աշխարհը իրեղեն / Անիրական երազի մեջ մի պատիր:* («Երգեհոն»):

Կյանքի եւ Մահվան նոր՝ թամրազյանական յուրօրինակ ընկալումները արդի հայ պոեզիայի նվաճումներն են: Կյանքմահ հարափոփոխության մեջ բանաստեղծն ունի իր հստակ ձեւաչափումները. մարդու ներսում են կատարվում բոլոր փոփոխությունները. սերմը փոխանցվում է սերնդեսերունդ՝ *Մենք մահանում ենք, սակայն չենք մեռնում / Մենք ծիլ ենք տալիս նորից ու նորից:* Այս փիլիսոփայական հարցադրմամբ հստակեցնում է բանաստեղծական ժողովածուի նյութ-բովանդակությունը.

*Ինչպե՞ս օտարվող այս տիեզերքը*
*Ընկալել, իբրեւ «սրբազան խավար»,*

ապա՝ հաջորդում է բանաստեղծական ես-ի հոգեկցական տարանջատումը իրական աշխարհից.Երբ նրա զարկը անհաղորդ է քեզ Եվ իր պատկերը՝ աղոտ, անավարտ:

Իրականության խզման տիրույթում Թամրազյանը վերամարմնավորում է իր բանաստեղծական աշխարհը՝ Միջնաշխարհը, որը «ներաշխարհի ու արտաքին աշխարհի հպման, գոյավորման, խաչասերման մի տարածություն է, որի տատանվող եզրագծերով հոգին շոշափում է էությունների աղոտ աշխարհը եւ սնում նրանցով իր տարածական խորքերը: Դա այն վայրն է, ուր ներքին եւ արտաքին աշխարհները հանդիպում են իրար, ներքին պատկերը՝ արտապատկերին, գրողը իր երեւակայական ընթերցողին, հիշողությունը իր երազանքին»:

Միջնաշխարհում իրերն ու երեւույթները, առարկաներն ու անձերը առաջանում-փոխվում-փլուզվում են Բառի խորքային ճյուղավորումների ու ծավալումների շնորհիվ, եւ այդ շրջապտույտի մեջ էլ հեղինակը արարում է Գոյի լինելության ընթացքը, որը չունի սկիզբ ու ավարտ.

*Մենք չե՛նք արթնանում ու քուն չե՛նք մտնում,*
*Չենք ծնվում, ավաղ, ու չենք մահանում,*
*Ուրիշ մի կյանքի եզերքն է փնտրում*
*Բյուր սերունդների շղթան անանուն:*

Բանաստեղծի վերացարկված, երեւութական աշխարհում Բառերը մարդեղացված են, այսպես՝ *Բառը ձայն ունի ու տեսողություն / Ու թղթի վրա դողացող ձեռքեր, / Եվ իբրեւ խռովք, իբրեւ թրթռություն՝ / Նրա քայլերը մոտենում են քեզ:* Զգում ենք Բառի սրտի բաբախյունը՝ *Բառեր ու տողեր, օրեր ու թվեր / Որ նրանց խորքում սիրտն է բաբախում:* Ավելին՝ մենք շոշափելի տեսանելիությամբ ականատես ենք դառնում Բառի աստիճանակարգային զարգացմանը՝ նշանագիր-հնչյուն-բառ-խոսք հերթագայությամբ.

*Նշանագրեր, այլ ոչ թե բառեր՝*
*Փռված սպիտակ թղթի երեսին,*
*Մի քիչ հմտություն ու մի քիչ արվեստ*
*Ու ճանաչում եմ քիչ առ քիչ ես ինձ:*
/«Ձեռագիր»/

Թամրազյանական բառերը մեծ առաքելություն ունեն. նրանք՝ որպես նշանագրեր, շոշափում են բանաստեղծի հոգեկան աշխարհը՝ տխրությունը, կարոտը, վախը, հիշողությունը, երազը, տեսիլը, իրար կապում երեւութական ու իրական աշխարհները եւ վերջնամասում վերածվում Խոսքի: Միջնաշխարհի իրականությունը կերտում են Բառերը, որոնք իրական կյանքը փոխակերպում են զգայական հիշողության եւ կորցրած ժամանակի որոնման, իսկ զգայական հիշողու-



կնքել արյան ու դարի հետ, Բառն է զգում երեւութական աշխարհի գեղեցկությունները, շոշափում բանաստեղծի գերզգայուն հոգին - *«Բառը հոգու գերագույն նշանն է»* (կամ՝ *Ու ըմբռնում ես՝ բառն է նախնական / Այս կյանքի հենքը նախախնամում)* բանաձեւում է բանաստեղծը:

Մեքսիկացի գրող, մշակութաբան Օկտավիո Պասի՝ պոեզիայի մասին ձեւակերպումները բնութագրական են հենց թամրազյանական աշխարհին. «Բառերը, հնչյունները, ներկերն ու այլ նյութերը վերափոխվում են, հենց որ մտնում են պոեզիայի շրջանակ: Չդադարելով լինել նշանակությունների կրողներ եւ հաղորդակցման միջոցներ, դրանք վերածվում են «այլ բանի»: Սակայն այդ վերածումն, ի տարբերություն այն բանի, ինչ տեղի է ունենում տեխնիկայի հետ, դավաճանություն չէ քո բնույթին, այլ վերադարձն է՝ առ այն: Լինել «այլ բան»՝ նշանակում է՝ լինել «հենց այն բանը», այն, որ իրական է եւ ի սկզբանե էություն»:

Հարց է ծագում. իրական աշխարհի տեսլականը բառերին հանձնած պոետ-քաղաքացին իր հոգեւոր թաղանթում ինչպե՞ս է ապրում, հարաբերվում, վերարժեւորում մարդկային արժեքները ու ի՞նչ խոհ-պատգամ է հղում ընթերցողին:

Թամրազյանի խոհաշխարհում քնարական հերոսը հանդես է գալիս ներքին շունչ (ուրվական) - ներքին մարդ - բանաստեղծ եռակերպությամբ:

Ներքին մարդու մենախոսությունը զգայական խոհ է՝ *«Մենք դուրս ենք դրել մեզ՝ մեր իսկ կյանքից»* փիլիսոփայական բանաձեւումով: Տարածաժամանակային ծիրում բանաստեղծը հստակ տեղակայում է ներքին մարդուն.

*Ու մենախոսել միշտ խզման եզրին,*
*Երբ քո ներսում է կյանքը փլուզվել:*
*շոշափում ես քո տխրությունը / Մոմե վարդի պես մերկ ու գեղեցիկ,* գ/ ներքին ես-ի օտարվածությունը՝ *Դժվար է ապրել, դժվար է անգամ / Շնչել, երբ շուրջը մաղձ է ու թույն / Ու կաղապարել խոսքով ապագան / Ու մրուր դառնալ օրվա լուծույթում,* դ/ հոգու եւ մարմնի երկվությունը՝ *Դու երկատվել ես, ու արյան նման / Ներծծվել է քեզ կյանքը եռակի,* ե/ սերը՝ *Քեզնից եմ առնում շունչն իմ հարակա / ու մենք ապրում ենք «համաշնչապես»:*

Այսպիսով՝ Թամրազյանի հոգեւոր միջուկում մարդեղացած բառերը շոշափում են գրողի գերզգայուն հոգին, զգում նրա երեւութական աշխարհի գեղեցկությունները եւ այդ հոգեւոր թաղանթից արարում մի աշխարհ, որտեղ ապրումը փոխակերպվում է ներապրումի, ժամանակը՝ ներքին ժամանակի, մարդը՝ ներքին մարդու, տիեզերքը՝ ներտիեզերքի, բանաստեղծությունը՝ հոգետան, բանաստեղծական աշխարհը՝ հոգենյութի, որի միջոցով էլ բանաստեղծը իմաստավորում է խավարից լույս տանող մեծ Լինելության խորհուրդը:

«Վերացարկումը միշտ համարժեք հիմք ունենա հենց Միջնաշխարհում, երազների եւ իրականության սահմանաշերտին, որ քուն թե հարթմնի, դեռ անապակ, դեռ նոր մարմնավորվող ու թաղանթավորվող զգացմունքների մեջ է թաքախված...»,- բանաստեղծի այս միտքը տարրալուծվում, իմաստավորվում է նրա պոեզիայում: Տեղի է ունենում Կյանքի վերաբնակեցում սեփական հոգեաշխարհում՝ *Մեր մեջ է կյանքը մեր բնակալում, / Եվ ճյուղավորվում, եւ շյուղ է տալիս, / Եվ հուն է բացվում մեր արյան առուն, / Կիրքը դառնում է կենսական ավիշ,* Կամ՝ *Մեր շուրջն է հավերժ կյանքը պտտվում, / Ու մենք կարող պոկվել մեզանից,* Կամ՝

*Քո միջով է կյանքը հոսում*
*Անրջում են երազ ու նինջ:*

Սեփական ես-ով աշխարհը ճանաչելու թամրազյանական պոետականությունը առնչակցվում է ամերիկացի գրող Ու. Ուիթմենի հոգեզննության պատկերի հետ.

*Քաղաքը քնած է, եւ գյուղերը քնած են,*
*Բոլոր ապրողները քնած են,*
*Նրանք բոլորը ներհոսել են իմ մեջ*
*եւ ես ներհոսում եմ նրանց մեջ,*
*Նրանք բոլորը ես եմ:*
(«Խոտի տերեւներ»)

Իրական կյանքի սահմանը հատելով՝ բանաստեղծը վերսլացումով կերտում է մի անգո-անիրական աշխարհ, որի մեջ հեղինակը վերապրում է կարոտի սուր բռնկումներ, հոգեկան փլուզումներ ու երկատվածություն, հասու դառնում ներքին իրերի ներդաշնակ շարժմանը.

*Ե՛ս եմ այս կյանքը երեւակայել,*
*Խոր քնի մեջ է կարոտն այդ զարթնում,*
*Ու նրա համար չկան սահմաններ,*
*Նա ավելի է իրական, քան դու...*
(«Հոգենյութ»)

խոհը ծավալում ու խտացնում է իր արժույթը ժողովածուն մեկնարկող ու ավարտին հասցնող «Սրբազան խավար» բանաստեղծության մեջ.

*Ու անրջում ենք ասես երազում,*
*Ասես քնի մեջ զրուցում երկար*
*Զգում ենք ասես՝ մահ չկա կյանքում,*
*Այլ անմեռ բնազդ, ապրելու հրճվանք,*
*Տենչում ես ապրել կյանքում այդ թաքուն,*
*Թեկուզ խավարի գիրկը մխրճված:*

Բանաստեղծի ներքին մարդու հուսալքության ու մենակության զգացումները խորհրդանշող՝ «կույր քաղաք», «մեռած աչքեր», «կույր իղձեր», «ամայացած հայացք», «օդեղեն կամուրջ», «կույր ժամանակ», «կույր անգիտություն» բառ-պատկերները կազմաքանդվում-նորանում են, երբ հեղինակը ցուցանում է իր հոգու՝ խավարից լույս տանող ճանապարհը՝ *Մի՛ քիչ ջերմություն, եւ ուրիշ ոչինչ /Էլ ոչինչ պետք չի ապրելու համար...* («Կարոտ» ), Կամ՝

*Բայց ես տենչում եմ երկար անձրեւներ*
*Ինձ իջնեն այնքան, որ անձրեւանամ,*
*Որ ինքս իջնեմ ձեզ իբրեւ անձրեւ,*
*Որ ձեր սրտերում... մի քիչ ջերմանամ...*
(«Անձրեւի մարդը»)

Թամրազյանական աշխարհում ընթերցողը ներշնչվում-հիանում-հափշտակվում է իրական ու երեւութական աշխարհների վերապրումից հյուսված Հոգենյութի խոհականությունից, կռահում-ըմբռնում է «սրբազան խավարի» փիլիսոփայական ենթաշերտն ու սնուցող երակը՝ *Այդ խավար լույսն է, որ չի ցամաքում: / Այդպես իմ կյանքը եկավ ու անցավ / Այդ ե՛ս չեմ, այդ իմ հոգի՛ն է երգում,* զգում-տեսնում- ընկալում է հեղինակի խոհաշխարհը, *Ու թանկ է ամեն անցնող ակնթարթ, / Ու սիրելի է ամեն հեռացող / Անցնող օրվա պես ընդունիր կյանքդ / Ու բավարարվիր միայն եղածով,* կռահում-յուրացնում-արժեւորում է իրեն ուղղված պատգամները. *Ու իրար մաղթենք՝ «Աչքի նման պարզ / Ու հայացքի պես թափանցիկ եղիր»,* հավատում է բանաստեղծի տեսլականին.

*Վաղ առավոտյան քնից արթնանալ,*
*Հավատալ, որ կա անսահման աշխարհ.*
*Որ ծայր է առնում մի պարզ հայացքից,*
*Որ չի տրորել դեռ կյանքը պղտոր՝*
*Անտես ընթացող կյանքն այդ հարակից,*
*Որին չի ցնցել ոչ մի բառ կամ տող...*

**ԱՆԻ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**
**Բանասիրական գիտությունների թեկնածու**

## Շնորհավորանք

Այսօր լրանում է բանաստեղծ, Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, իրավ մտավորական Հրաչյա Թամրազյանի ծննդյան 60-րդ տարեդարձը: Այս առթիվ «Ազգի» խմբագրությունն իր եւ ընթերցողների անունից ջերմորեն ողջունում է հոբելյարին եւ նրան մաղթում բանաստեղծական նորանոր թռիչքներ, հոգենյութային սուզումներ, ոգեկան անդորր, ստեղծագործական ու գիտական նվաճումներ:

# Մարզական

## Մանուել Պետրոսյանն առաջին ոսկե մեդալը պարգեւեց Հայաստանին

Բրազիլիայում անցկացվող դպրոցականների համաշխարհային մարզական խաղերում՝ «Գիմնասիադե-2013-ում» Հայաստանին առաջին ոսկե մեդալը պարգեւեց պատանի շախմատիստ, վարպետության թեկնածու Մանուել Պետրոսյանը: Նա 7 մասնակիցների միջեւ անցկացված շրջանաձեւ մրցաշարում 6 հնարավորից վաստակեց 4,5 միավոր եւ գրավեց առաջին տեղը: Հայաստանի մյուս ներկայացուցիչը՝ ՖԻԴԵ-ի վարպետ Տիգրան Հարությունյանը 3,5 միավորով զբաղեցրեց 5-րդ տեղը: Արծաթե եւ բրոնզե մեդալներին արժանացան 4-ական միավոր վաստակած բրազիլացի Արթուր Գոնսիջո Ջիարին եւ պորտուգալացի Լուիս Պեդրո Ֆեռեյրան:



Իսկ առաջին մեդալը Հայաստանին պարգեւել էր լողորդ Վահան Մխիթարյանը, որը 50 մ ազատ լողաոճում դարձել էր բրոնզե մրցանակակիր: Մեր մարզիկները եւս 2 բրոնզե մեդալ նվաճեցին ձյուդոյի մրցումներում: Աչքի ընկան Սամվել Խաչատրյանն ու Գեւորգ Խիթարյանը:

Ընդհանուր առմամբ Բրազիլիայում անցկացվող մրցումներին, որի ծրագրում ընդգրկված են սպորտային եւ գեղարվեստական մարմնամարզությունը, ատլետիկան, լողը, թեթեւ ատլետիկան, շախմատը, ձյուդոն ու կարատեն, մասնակցում են 38 երկրների դպրոցականներ: Բոլորից հաջող են հանդես գալիս Ռուսաստանի ներկայացուցիչները, որոնք նվաճել են 62 մեդալ (37 ոսկե, 16 արծաթե, 9 բրոնզե): Բրազիլացիները 69 մեդալ են նվաճել, սակայն դրանցից միայն 19-ն են ոսկե: Հայաստանը նվաճած 1 ոսկե եւ 3 բրոնզե մեդալներով ընդհանուր հաշվարկում զբաղեցնում է 14-րդ հորիզոնականը:

## «Ալաշկերտի» սեփականատերը կտրուկ միջոցների է դիմել

Վերջին տուրերում «Ալաշկերտի» կրած խոշոր հաշվով պարտությունները խիստ բարկացրել են ակումբի հիմնադիր նախագահ Բագրատ Նավոյանին, որը հերթական անգամ դիմել է կտրուկ միջոցների:

Երկկողմ համաձայնությամբ խզվել են պայմանագրերը Վարդան Պետրոսյանի, Տիգրան Գրիգորյանի, Խորեն Մանուչարյանի եւ Անդրանիկ Կարապետյանի հետ: Բրազիլացի Ասիս Գիմարաեշ Հենդերսոնի հետ պայմանագրի ժամկետն ավարտվել է եւ նա կհեռանա թիմից: Չի երկարաձգվի պայմանագիրը նաեւ ռուսաստանցի Արթուր Շահազիզյանի հետ:

Ավելի խիստ միջոցներ են կիրառվել 1-ին խմբում հանդես եկող «Ալաշկերտ-2-ի» նկատմամբ, որը վերջին 5 խաղերից 3-ում պարտվել է, 2-ն ավարտել ոչ-ոքի: Թիմը փաստորեն լուծարվել է: Ազատվել են բոլոր ֆուտբոլիստները, ինչպես նաեւ մարզչական կազմը Ըստ Բագրատ Նավոյանի, հունվարին նոր թիմ է կազմավորվելու նոր մարզիչների գլխավորությամբ: Նշենք, որ մեկ տարվա ընթացքում «Ալաշկերտում» արդեն մարզչական մի քանի փոփոխություն է կատարվել:

## Ներկայացվել է աշխարհի առաջնության գնդակը

Ռիո դե Ժանեյրոյում կայացել է ֆուտբոլի աշխարհի 2014-ի առաջնության գնդակի ներկայացման պաշտոնական արարողությունը: Նոր գնդակը ստացել է «Բրազուկա» անվանումը, որը թարգմանաբար նշանակում է «Հայրենակից»: Գնդակը ներկայացրել է բրազիլական «Ֆլումինենսեի» հարձակվող Ֆրեդը: Գնդակն արտադրող ընկերությունը խոստացել է Բրազիլիայի 12 քաղաքներում, որտեղ անցկացվելու են առաջնության խաղերը, դեկտեմբերի 3-ին ծնված բոլոր երեխաներին նվիրել «Բրազուկաներ»: Այս անվան օգտին քվեարկել է մասնակիցների 78 տոկոսը:



Գնդակը ներառում է Բրազիլիայի ազգային գույները: «Ադիդաս» ֆիրման գնդակի արտադրությունում կիրառել է նորագույն տեխնոլոգիաներ:

Տեղեկացնենք, որ աշխարհի առաջնության գնդակների անվանակոչության ավանդույթը սկսվել է 1970-ին Մեքսիկայում կայացած աշխարհի առաջնությունից:

## Զամբյուղների կազմը հայտնի է

**Վաղը բրազիլական Կոստա դու Սաուիպա քաղաքում կկայանա 2014-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության մասնակիցների վիճակահանությունը: Վիճակահանությունից առաջ մասնակից 32 հավաքականները տեղաբաշխվել են 4 զամբյուղներում: Վիճակահանությամբ հավաքականները կբաժանվեն 8 խմբի:**

**Առաջին զամբյուղում ընդգրկված հավաքականները կգլխավորեն խմբերը: Ընդ որում առաջնության կազմակերպիչ երկիր Բրազիլիայի հավաքականը մեխանիկորեն կգլխավորի A խումբը: 1-ին զամբյուղում են նաեւ Իսպանիան, Գերմանիան, Արգենտինան, Կոլումբիան, Բելգիան, Ուրուգվայն ու Շվեյցարիան:**

**2-րդ զամբյուղում տեղաբաշխվել են Չիլին, Կոտ դ'Իվուարը, Էկվադորը, Գանան, Ալժիրը, Նիգերիան եւ Կամերունը:**

**3-րդ զամբյուղում ընդգրկված են ԱՄՆ-ը, Մեքսիկան, Կոստա Ռիկան, Հոնդուրասը, Ճապոնիան, Իրանը, Հարավային Կորեան եւ Ավստրալիան:**

**4-րդ զամբյուղը կազմում են Հոլանդիան, Իտալիան, Անգլիան, Պորտուգալիան, Հունաստանը, Բոսնիան, Խորվաթիան, Ռուսաստանը եւ Ֆրանսիան:**

**Խմբերը կկազմավորվեն յուրաքանչյուր զամբյուղից մեկական հավաքական ընդգրկելով: Ընդ որում միեւնույն խմբում չեն կարող ընդգրկվել հարավամերիկյան 2 հավաքականներ եւ 2-ից ավելի եվրոպական ընտրանիներ:**

**Հիշեցնենք, որ 2014-ի ֆուտբոլի աշխարհի առաջնությունը մեկնարկելու է հունիսի 12-ին Սան Պաուլու քաղաքում կայանալիք մրցախաղով: Խմբային մրցաշարի հանդիպումները կավարտվեն հունիսի 26-ին: Եզրափակիչ հանդիպումը կկայանա հուլիսի 13-ին Ռիո դե Ժանեյրոյի «Մարականա» մարզադաշտում:**

ՇԱԽՄԱՏ

## Ռուսները գործնականում նվաճեցին չեմպիոնի տիտղոսը

**Շախմատի աշխարհի թիմային առաջնության նախավերջին՝ 8-րդ տուրում Հայաստանի հավաքականը 3,5-0,5 հաշվով պարտության մատնեց հոլանդացիներին: Մեր թիմից հաղթեցին Լեւոն Արոնյանը, Վլադիմիր Հակոբյանն ու Տիգրան Պետրոսյանը, որոնց մրցակիցներն էին համապատասխանաբար Անիշ Գիրին, Լյուկ վան Վելին եւ Էրվին Լ Ամին: Գաբրիել Սարգսյանը միավորը կիսեց Սերգեյ Տիվյակովի հետ պարտիայում:**

**Այս հաղթանակից հետո մեր ընտրանին վաստակեց 10 միավոր եւ տեղափոխվեց 4-րդ հորիզոնական: Մրցանակային տեղ զբաղեցնելու համար այսօր մեր շախմատիստներին ուկրաինացիների հետ կայանալիք մրցախաղում միայն հաղթանակ է անհրաժեշտ:**

**Տուրի կենտրոնական մրցախաղը Ռուսաստանի եւ Ուկրաինայի հավաքականների հանդիպումն էր, որում գործնականում վճռվելու էր աշխարհի չեմպիոնի հարցը: Ռուսներին հաջողվեց 2,5-1,5 հաշվով պարտության մատնել մրցակցին ու 13 միավորով միանձնյա գլխավորել աղյուսակը: Ռուսների հաղթանակն ապահովեց Յան Նեպոմնյաշչին՝ առավելության հասնելով Յուրի Կրիվորուչկոյի նկատմամբ: Ռուսները գործնականում նվաճեցին աշխարհի չեմպիոնի տիտղոսը, քանի որ այսօր կայանալիք ավարտական տուրում մրցելու են մրցաշարի բացահայտ հետնապահ եգիպտացիների հետ, որոնք 8-րդ անընդմեջ պարտությունը կրեցին ադրբեջանցիների հետ մրցավեճում՝ 0-4:**

**Ուկրաինացիները 12 միավորով 3-րդ տեղում են: Նրանց շրջանցեցին 12 միավոր ունեցող չինացիները՝ 2,5-1,5 հաշվով հաղթելով գերմանացիներին: ԱՄՆ-ի հավաքականը ոչ-ոքի խաղաց թուրքերի հետ: Ամերիկացիներին պարտությունից փրկեց Վարուժան Հակոբյանը՝ հաղթելով Էմրե Կանին:**

## Էդգար Մինասյանը կարատեի աշխարհի գավաթակիր



**Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում անցկացված կարատեի համաշխարհային ֆեդերացիայի պատանիների եւ երիտասարդների աշխարհի գավաթի խաղարկությունում հիանալի հանդես եկավ Հայաստանը ներկայացրած Էդգար Մինասյանը՝ դառնալով հաղթող: Նա նախնական փուլերում հաջորդաբար պարտության է մատնել Ուկրաինայի, Խորվաթիայի, Հունգարիայի եւ Իտալիայի ներկայացուցիչներին: Եզրափակիչում նրա մրցակիցը Եվրոպայի չեմպիոն խորվաթ կարատեիստն էր, որին եւս Էդգարը հաղթեց ու արժանացավ գավաթակրի տիտղոսին:**

## Չեմպիոնները որոշվեցին

**Մայրաքաղաքի «Միկա» մարզադահլիճում իրենց մրցավեճն ավարտեցին ձյուդոյի մեծահասակների Հայաստանի առաջնության պարգեւները վիճարկող ձյուդոիստները: Նրանք ուժեղագույններին որոշեցին տղամարդկանց քաշային 6, կանանց՝ 2 կարգերում:**

**Տղամարդկանց մրցաշարում չեմպիոններ դարձան Գարիկ Հարությունյանը (60 կգ), Դավիթ Ղազարյանը (66 կգ), Դավիթ Նիկողոսյանը (73 կգ), Անդրանիկ Չափարյանը (81 կգ), Սերգեյ Դանիելյանը (90 կգ) եւ Ազատ Աբրահամյանը (գերծանր քաշ):**

**Կանանց մրցաշարում ուժեղագույններն էին Երջանիկ Կարապետյանը (52 կգ) եւ Ռոզա Խաչատրյանը (52 կգ-ից բարձր):**

## Ռոնալդուն ամենաարժեքավոր ֆուտբոլիստն է

Մադրիդի «Ռեալի» հարձակվող Քրիշտիանու Ռոնալդուն ճանաչվել է 2012/13-ի Իսպանիայի առաջնության ամենաարժեքավոր ֆուտբոլիստ՝ գերազանցելով «Բարսելոնի» ֆուտբոլիստներ Լիոնել Մեսիին եւ Անդրես Ինիեստային: Հարցման արդյունքներով Ռոնալդուն վաստակել է 32 միավոր, Մեսին՝ 26, Ինիեստան՝ 11:

Առանց մրցանակի չի մնացել նաեւ Լիոնել Մեսին՝ ճանաչվելով առաջնության լավագույն հարձակվող: Անդրես Ինիեստան էլ արժանացել է լավագույն հարձակողական ոճի կիսապաշտպանի համար սահմանված մրցանակին:

Լավագույն դարպասապահ է ճանաչվել Տիբո Կուրտուան («Ատլետիկո», Մադրիդ): Լավագույն պաշտպանի մրցանակը հանձնվել է Սերխիո Ռամոսին («Ռեալ»), կիսապաշտպանինը՝ Այեր Իլյարամենդիին («Ռեալ» Սոսյեդադ):

Առաջնության հայտնություն է ճանաչվել Այեր Իլյարամենդին, իսկ լավագույն մարզիչ՝ Դիեգո Սիմեոնեն («Ատլետիկո»): «Արդար խաղի» մրցանակը ֆուտբոլիստներից հանձնվել է Մադրիդի «Ռեալի» դարպասապահ Իկեր Կասիյասին, իսկ թիմերից՝ Մադրիդի «Ատլետիկոյին»:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԳՈՐԾԱՐԱՐ ՅՈՍԻ ԿՈՀԵՆ

# «Թուրք» կոչվող ազգ գոյություն չունի. թուրք պրոֆեսոր

Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Աթաթուրքի՝ հրեա լինելու մասին հրապարակումից հետո Թուրքիան ցնցող եւս մի հայտարարությամբ հանդես է եկել «Սելջուկ» համալսարանի պրոֆեսոր Յասին Աքթայը: Անկարայի Միջինարեւելյան տեխնիկական համալսարանի շրջանավարտ պրոֆեսորը, ով, ի դեպ, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորած «Արդարություն եւ զարգացում» կուսակցության (ԱԶԿ) ղեկավար խորհրդի անդամ է, Բայբուրթի համալսարանում անցկացված գիտաժողովում հայտարարել է, որ «թուրք կոչվող ցեղ չկա, դա սինթեզ է»:

Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, վկայակոչելով թուրքական «Հաբերլեր» լրատվական կայքը, պատասխանելով մի ուսանողի հարցին, թե ճի՞շտ է, արդյոք, սոցիալական պետություն կառուցելու համար մեծամասնություն կազմող ազգի ազգայնականությունն անտեսելը, Թուրքիայի իշխող կուսակցության ղեկավար կազմի անդամն ասել է. «Եթե այս երկրում թուրքերի հետեւից գնաս, գինը թանկ կարժենա: Թուրքիան կհասցնենք մասնատման: Ձեր ասած թուրքը սինթեզ է, թուրք կոչվող ազգ գոյություն չունի: Քեզ ասել են, որ դու թուրք ես: Իսկ ի՞նչ է նշանակում թյուրքականություն: Միջին Ասիայից ենք եկել եւ սինթեզվել այստեղի ժողովուրդներին»,- հայտարարել է նա:

Թուրք պրոֆեսորի այդ հայտարարությունը, որը նա հիմնավորել է նաեւ մի քանի այլ թուրք մտածողների արտահայտություններով, մեծ արձագանք է առաջացրել Թուրքիայում:

Թուրքիայի խորհրդարանի խոսնակ Ջեմիլ Չիչեքն այդ առնչությամբ թուրքական ԶԼՄ-ներին ասել է, որ եթե այդ խոսքերն ասվել են որպես առանձին նախադասություն եւ կտրված չեն համատեքստից, ապա անընդունելի են: «Այդ արտահայտությունը հակասում է պատմական եւ սոցիոլոգիական իրողությանը: Պատահում է, որ քաղաքական գործիչների խոսքից մեկ-երկու նախադասություն ընդհանուր համատեքստից հանվում եւ օրակարգային հարց է դարձվում: Նման դեպքերի մենք շատ ենք հանդիպում»,- ասել է Չիչեքը:

# «Թուրքիայի Ձայնը» մրցույթի հայ մասնակիցը

Նոյեմբերի վերջին շաբաթվա ընթացքում Թուրքիայում հեռուստատեսային լսարանի ուշադրությունը սեւեռվել է Սորչ Շեքերի վրա, որը «Թուրքիայի Ձայնը» երաժշտական մրցույթին մասնակցելով հայտարարել է, որ հայկական ծագում ունի, տեղեկացնում է «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը:

«Սթար Թիվի» հեռուստակայանի անցկացրած մրցույթի ժամանակ 32-ամյա Շեքերը նշել է, որ Ստամբուլում է ծնվել եւ հաճախել հայկական Դադյան վարժարանը: Հոր անունը Խաչիկ է, ծնվել է Սիվասում, իսկ մոր անունը՝ Գյուլենիա, ծնվել է Թուրքիայում: Նա ավելացրել է, որ կինը նույնպես հայ է, եւ ծնողները հաճախել եւ ավարտել են հայկական վարժարաններ, ունեն շատ հայ ընկերներ:

# Ամերիկյան Hubble աստղադիտակը ջրի հետքեր է հայտնաբերել հինգ մոլորակներում

Աշխարհում խոշորագույն ամերիկյան Hubble աստղադիտակը ջրի հետքեր է հայտնաբերել հինգ արտամոլորակներում: Այս մասին, ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, դեկտեմբերի 3-ին հաղորդել են Գոդարի անվան տիեզերական թռիչքների կենտրոնի ներկայացուցիչները: Աստղադիտակը հաղորդել է ինֆրակարմիր սպեկտրում արված պատկերներ, որոնց վերլուծությունը գիտնականներին թույլ է տվել խոսել ջրի գոլորշու առկայության մասին WASP-17b, HD209458b, WASP-12b, WASP-19b եւ XO-1b արտամոլորակներում: Այս երկնային մարմինները դասում են «տաք յուպիտերների» շարքին:

Վերլուծելով յուրաքանչյուր առանձին մոլորակի մթնոլորտի սպեկտրալ պատկերը՝ աստղագետները հանգել են այն եզրակացության, որ ցանկում թվարկված մոլորակներից երկուսում ջուրն ավելի շատ է:

«Մենք արձանագրել ենք շատ հստակ ազդանշան, որը մեզ ասում է, որ այնտեղ ջուր կա. չափազանց աշխատասար հետազոտություններից հետո մենք կարողացանք դա հաստատել»,- նշել են կենտրոնի ներկայացուցիչները:

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

## Սրբագրում եւ խմբագրում

ամեն ծավալի ու բովանդակության
հայերեն տեքստերի, գրքերի
E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ 2014Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 9 -ԻՆ, ԵՎ ՀՈՒՆՎԱՐԻ 24 -ԻՆ, ԺԱՄԸ՝ 14:30-ԻՆ, «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23:**

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

**ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 26-ի թիվ 929-Ա որոշմամբ լուծարվող «Էկոսերվիս» ՓԲԸ-ի (հասցեն՝ք.Երեւան, Գաջեգործների 75) հաշվեկշռում գտնվող գույքը**

| Հ/Հ | Գույքի անվանումը | Մակերեսը /ք.մ./ | Հողատարածքը /հա/ | Գնահատված արժեքը առանց հողամասի կադաստրային արժեքի/դրամ/ | Մեկնարկային գին /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Էկոսերվիս» ՓԲԸ-ի գույքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13052013-01-0198 վկայական), որպես մեկ ամբողջական միավոր | | 0.56507 | | 66096000 |
| | այդ թվում՝ | | | | |
| | շենք, շինություններ՝ | 1978.4 | | 65996000 | |
| | գրասենյակ | 581.9 | | | |
| | պահեստ | 822.2 | | | |
| | պահեստ | 492.9 | | | |
| | ջրավազան | 55.4 | | | |
| | պարիսպ | 26 (65խ.մ.) | | | |
| | Այլ հիմնական միջոցներ (31 հատ) | | | 100000 | |

** Գնորդը պարտավոր է աճուրդի արձանագրությունը ստանալուց հետո սահմանված կարգով վճարել 0.56507հա հողամասի կադաստրային արժեքը:*

Աճուրդը կանցկացվի **դասական** (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք մինչեւ աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը, ժամը՝ 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23) ներկայացրել.

- աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ 3304800 դրամ, մուտքագրման հաշիվն է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի թիվ 163518001652 դրամային հաշիվը:
- անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական: Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ: Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23) մինչեւ աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը, ժամը՝ 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են՝ ընդհուպ մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտ(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ *յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը՝ 09:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը՝ 13:00-ից մինչեւ 14:00), դիմելով Հ.Մխեյանին 093-08-05-08 հեռախոսահամարով:*

Նախքան աճուրդի սկսվելը՝ աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը: Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց երեսուն րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված **ժամկետում (10 օրվա ընթացքում)** հետագա վճարումները կատարելու դեպքում, նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ (մեկից ավելի լոտ ձեռքբերելու դեպքում նախավճարը հաշվարկվում է ամենաբարձր վաճառքի գին ունեցող լոտի վճարման ենթակա գումարի մեջ), իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից, իսկ լոտի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված լոտի գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմելուց հետո:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, կարող եք դիմել ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռ. 23-73-00, ինտերնետ URL://www.spm.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

*ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ*

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՋԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աղայան 9/3 | կաքսայաստւն | 120.55 | 95.16 | 16,000,000 |
| 2 | Գ.Նժդեհի 25/6 | կաքսայաստւն | 165.61 | 165.61 | 9,450,000 |
| 3 | Գրիբոյեդովի 2/2 | կաքսայաստւն | 220.36 | 191.6 | 17,000,000 |
| 4 | Չեխովի 14/3 | կաքսայաստւն | 151.2 | 139.86 | 8,200,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ դեկտեմբերի 18-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ դեկտեմբերի 18-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համար՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 4.12.2013, գինը՝ 100 դրամ, տպագրուած է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: